№ 157 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՅՈՒԼԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՅՈՒԼԻՍԻ № 157

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 5 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն՝ լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի3 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱԼՑ ՎԵՐՋԸ
6 ՐՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метиль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՃՈՒՐԴ ԵՐԵՒԱՆՈՒՄ

„Երեւանեան Զրանցք“ Ընկերութեան Խորհուրդը օգոստոսի 3-ին սոյն թուի Առևտրական Տուն Ա. և Տ. Աֆրիկեանների նշանակել է ԱՃՈՒՐԴ Երեւանում, գրասենեակում, հողային և սպայատակելու աշխատանքների (мостов. работ.), ըստ նախահաշիւի 13,622 ր. 27 կ. գումարի։

Գրաւական պահանջվում է՝ կանխիկ կամ տոկոսաբեր թղթերով—10%, երաշխաւորութեամբ—25%։

Տեխնիկական թղթերի և հաշիւների հետ կարելի է ծանօթանալ յիշեալ գրասենեակում։

Փակ ծրարները կընդունվեն նոյն գրասենեակում մինչև օգոստոսի 3-ի ցերեկվայ ժամը 12-ը։

(20, 25, 30) առ. 850. 3—1

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
Համար հարկաւոր են
ՏԵՍՈՒՉ,
Ռուսաց լեզուի և ռուսաց գրականութեան համար
ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԵՐԱԿԱՑՈՒ

Դասագինն է լարաններում 100 բուբլի (ռուսաց գրակ.), դասարաններում 75 բուբլի։ Վերակացուների ռոճիկն է 600-ական բուբլի և սնունդ։ Կունենան դասեր ևս առանձին վարձով։ Դիմել՝ Эчміадзинъ, въ Канцелярію ЕГО СВЯТѢЙШЕСТВА.
(հ.կ.ե.) (առ.) 828. 3—3

ԱՊԱԳԱՅԻ ՅՈՅՍՈՎ

Երբ դուք ուսում էք տալիս մանուկ սերնդին տարբերական դպրոցներում, դուք համոզված էք, որ այդ ուսումը պէտք է օգուտներ տայ ժողովրդին և ամբացնի նրան նիւթապէս և բարոյապէս։

Բայց զարմանալի կը լինէր, եթէ դուք դպրոցում մանուկին մի քանի տարի ուսում տալուց յետոյ՝ պահանջէիք, որ մանուկը շօշափելի եկամուտ ցոյց տայ և դպրոցի ծախքը հանի։

Նոյնպէս՝ երբ դուք սովորեցնում էք աղջիկներին ձեռագործ կամ կար ու ձև, ամենևին պայման չէք դնում, որ այդ ձեռագործն ու կար ու ձևը տան անմիջապէս այնքան արդիւնքներ, որ նրանք իրանց ծախքը հանեն և միևնոյն ժամանակ ապահովեն աշակերտուհու օրական ապրուստը։

Անշուշտ, շատ լաւ կը լինէր, որ ստացված ուսումը, իւրացված հմտութիւնները և սովորած արհեստները իսկոյն տային գործնական արդիւնքներ, բայց այդպէս չէ լինում ամեն անգամ երկրագործութեան մէջ։

Արդարև՝ այն կրթութիւնը, որ դուք տուել էք մատաղ սերնդին, ժամանակով բերելու է իր բեղմնաւոր հետևանքները, և հասարակութիւնը ժանուկ սերնդի ուսման շնորհիւ կամաց կամաց հարստանալու է, ամրանալու և բարգաւաճելու. բայց եթէ այսօր դեռ չէք ստացել անմիջական արդիւնքներ, այդտեղ մեղաւոր չէ ինքը ուսումը։ Մի տեղ որոշ ժամանակ է հարկաւոր, միւս տեղ յարմարութիւններ են անհրաժեշտ, մի ուրիշ տեղ նպաստող և աջակցող պայմաններ են պէտք հասնելու սպասելի հետևանքներին, սակայն ոչ ոք չի վստահանայ բացասել ուսումը և ուսման կարևորութիւնը հէնց միայն այն պատճառով, որ այսօր նա շօշափելի կերպով չէ տեսնում իր աչքի առաջ այդ ուսման արդիւնքները։

Ուսումը, գիտութիւնը, արհեստը՝ իբրև բարի սերմեր՝ պէտք է սերմանել և սպասել մինչև նրանք արմատ բռնեն, աճեն, զարգանան և տան իրանց վերապահված օգուտները։

Չը պէտք է յուսահատվել այն բանից, որ այդ սերմերը դանդաղում են արմատ բռնելուց. չը պէտք է լքվել այն բանից, որ դրված սերմերի մի մասը ապարդիւն է անցնում. չը պէտք է հիասթափվել, որ միանգամից չէ ստացվում առատ հունձ։

Դանդաղումը, անաջողութիւնը և ապարդիւնութիւնը փոխանակ վատութիւն առաջ բերելու՝ պէտք է դրդեն աւելի ևս ամուր կերպով դիմել գործին, կրկնապատկել եռանդն ու ջանքերը, ճոխացնել գործելու եղանակները։

Մեզնից աւելի առաջ գնացած ազգերը սկսել են գործել շատ վաղուց և այժմ էլ գործում են անխոնջ կերպով՝ ապագայում յաղթանակներ տանելու համար։

Նայեցէք նրանց գործելու եղանակներին։ Ահա մի տեղ բացված է մի դպրոց, որ տալիս է կրթութիւն։ Մի ուրիշ տեղ բացված է մի հաստատութիւն, որ իբրև թանգարան, իբրև ցուցահանդէս՝ գաղափար է տալիս երկրի և նրա արդիւնքների, այս ու այն արհեստի ու արդիւնագործութեան մասին։ Ահա մի երրորդ տեղ կազմակերպվում են դասախօսութիւններ և զրոյցներ զանազան առարկաների մասին։ Ահա մի չորրորդ տեղ կազմվում են գրքոյկներ, դասագրքեր, գրվում են լրագրական յօդուածներ, յարմարեցվում են մոգական լապտերները և սինեմատոգրաֆները ցոյցերի համար։ Այդպէս և հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ տեղերում՝ գիտութիւն և արհեստ տարածելու համար՝ ձեռնարկվում են ուրիշ միջոցներ—ցուցադրաշարեր, կայարաններ, ճանապարհորդութիւններ և այլն։

Պէտք է սերմանել զանազան եղանակներով և չը վհատվել կէս ճանապարհին, չը լքվել չարախնդաց ձայներից և վայրահաչ ակնարկներից, առաջ գնալ անընկճելի եռանդով, հաւատալով որ կրթական և կուլտուրական գործը վերջ ի վերջոյ կը յաղթահարէ ամեն տեսակ խոչընդոտներ և կը տայ բեղմնաւոր արդիւնքներ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 18 յուլիսի

Կայսերական պալատի մինիստրը հեռագրում է. «Կիրակի, յուլիսի 18-ին Նոցին Մեծութիւնները Օգոստափառ Զաւակների հետ միասին ունկնդիր եղան պատարագին Կայսերական «Շտանդարտ» զբօսանաւի վրա։ Պատարագից յետոյ Բարձրագոյն ներկայութեամբ տեղի ունեցաւ նախաճաշ, որին հրաւիրված էին սվիտայի անձինք»։ (Հ.Գ.)

Կրոնշտատ, 18 յուլիսի

Յուլիսի 18-ին Կայսերական «Շտանդարտ» զբօսանաւը Նոցին Մեծութիւններով և Օգոստափառ Զաւակներով ժամանեց Կրոնշտատ։ Ստորագրեց Կայսերական Պալատի մինիստր գեներալ-ադիւտանտ բարոն Ֆրեդերիկս։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 17 յուլիսի

Համայնքների պալատը յետաձգեց իր նիստը մինչև նոյեմբերի 2-ը։ Պալատը կը հաւաքվի յուլիսի 21-ին պաշտօնապէս լսելու միապետի համաձայնութիւնը՝ արքայական երդման ֆորմուլայի մէջ կատարված փոփոխութեան մասին։ (Հ. Գ.)

—

Բերլին, 17 յուլիսի

Իտալական թագաւորի կողմից Վիլհելմ կայսրին արված զինաթափութեան առաջարկի մասին տարածված լուրերի առիթով, Պետերբուրգի Հեռագրական Գործակալութեան թղթակցին հաղորդել են արտաքին գործերի մինիստրութեան մէջ, որ իտալական թագաւորը ոչ մի առաջարկ չէ արել Վիլհելմ կայսրին և ոչ էլ այդ առիթով որևէ բանակցութիւն է տեղի ունեցել իտալական ու գերմանական կառավարութիւնների միջև։ Այդպիսով մատնացածին է այն տեղեկութիւնը ևս, թէ կայսրը մերժել է առաջարկը։ (Հ. Գ.)

—

Բագու, 17 յուլիսի

Զինավարժութեան ժամանակ նորակոչ զինուորներից մէկը սխալմամբ ռազմական փամփուշտ դրեց հրացանի մէջ և կրակելով վիրաւորեց մի զինուորի, միւսին էլ սպանեց։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 17 յուլիսի

Տեղական թերթերի ասելով՝ Տէօտոկիսը յայտնել է, որ հարկաւոր է խուսափել որևէ թեկնածութիւն առաջարկելուց Կրետէի կողմից՝ յունական ազգային ժողովի ընտրութեան ժամանակ, որպէսզի անախորժութիւն պատճառած չը լինեն օտար պետութիւններին։ Նա խոշհուրդ տուեց Վենիզէլոսին՝ հրաժարվել իր թեկնածութիւնը դնելու մասին։ (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 18 յուլիսի

Թագաւորի և թագաժառանգի ներկայութեամբ յուլիսի 16-ին ռուսական սահմանագլխի մօտ տեղի ունեցան բուսինական զօրքի 3-րդ և 4-րդ զօրաբանակների ռազմափորձերը։ (Հ. Գ.)

ՍՊԱՆԻԱՆ ՊԱՊԻ ԴԷՄ

Սան-Սեբաստիան, 17 յուլիսի

Կանալէխասը զեկուցեց թագաւորին Վատիկանի նօտայի մասին և յայտնեց, որ կառավարութիւնը չէ կարող ընդունել Վատիկանի պայմանները։ Այդ իմաստով էլ նա կը պատասխանէ պապի նօտային և կը շարունակէ հակակղերական պայքարը՝ յոյս տածելով թագի վստահութեան վրա։ Վատիկանին կից գտնվող դեսպանին առաջարկված է վերադառնալ Մադրիդ։ Կանալէխասը անխուսափելի է համարում Վատիկանի հետ ունեցած յարաբերութիւնների խզումը։

Լիբերալների կողմից ի պատիւ Կանալէխասի տրված բանկետում, վերջինս յայտնեց, որ լիբերալները Սպանիայում վճռական կռիւ են մղում, դնելով իրանց բոլոր յոյսը զօրքի և պալատների մեծամասնութեան վրա։ Այդ կռիւը ոչ թէ հակակրօնական է, այլ հակակղերական։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 17 յուլիսի

Բուրբոնական պրինց Խաիմէ՝ սենատորներին և պատգամաւորներին ուղղած իր նամակով բողոքում է պապի դէմ սկսված կռիւ դէմ և ասում, որ հեռու չէ այն օրը, երբ կարգապահութեան համախոհները Սպանիայում և սպանական զօրքը հանդէս կը գան կռիւ մղելու իսկական ազատութեան թշնամիների դէմ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 17 յուլիսի

Հաւասի գործակալութեանը հեռագրում են Մադրիդից, որ կղերական թերթերը վարձել են նաւեր և պատրաստել գնացքներ յուլիսի 30-ին Սան-Սեբաստիանում՝ թագաւորի առաջ ցոյց կազմակերպելու նպատակով։

Բիլբաոյում տեղի ունենալիք ցոյցը արգելվելու պատճառով, կազմակերպող կոմիտէը փողոցներում յայտարարութիւններ կպցնելով հրաւէր է կարդում կաթոլիկներին պատրաստ լինել ամեն միջոցի դիմելու և ագիտացիա մղել վաղը պապին անձնուիրութեան արտայայտութեան հեռագիրներ ուղարկելու։ (Հ. Գ.)

—

Բիլբաո, 17 յուլիսի

Քաղաքում տիրող յուզված դրութեան պատճառով նահանգապետը արգելեց վաղը տեղի ունենալիք կաթոլիկական ցոյցերը։ (Հ. Գ.)

—

Բիլբաո, 18 յուլիսի

Կաթոլիկները, որոնց մանիֆէստացիան արգելել էր կառավարութիւնը, բողոք են ուղարկել Կանալէխասին, պատռնալով կուելու համար կտրուկ միջոցների դիմել։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲՈԼԳԱՐԻԱ

Սոֆիա, 17 յուլիսի

Բոլգարական Հեռագրական Գործակալութիւնը հաղորդում է, որ Դիբրի սանջակից հեռացած տեղական կրթական ընկերութիւնների անդամները ներկայացրին Սոֆիայի մէջ գտնվող օտար պետութիւնների ներկայացուցիչներին և ուղարկեցին Կ. Պոլսի օտար դեսպաններին մի յիշատակագիր, որովնկարագրում են սանջակի իսկական դրութիւնը և յիշատակում այբանական աւազակախմբերի գաղանութիւններն ու թիւրքական իշխանութիւնների կամայական և անփոյթ վերաբերմունքը։ Պետութիւններին այդ դիմումով խնդրում են միջամտութիւն գործել տեղական քրիստոնեաների դրութիւնը բարւոքելու նպատակով։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 17 յուլիսի

Մամուլը շարունակում է զբաղվել մակեդոնական գործերով և եռանդով պատասխանում է թիւրքական լրագրների յօդուածներին։ «Դնէվնիկը» ասում է. «Կ. Պոլսի քաղաքագէտները չեն կարողանում տանել բոլգարական մամուլի մէջ յարուցված աղմուկը»։ «Դէն» թերթը պախարակում է չէտաների արարքը և ասում, որ բոլգարական կառավարութիւնը պէտք է միանգամայն կօրրէկտ վերաբերմունքով աշխատէ ձեռք բերել եռանդուն գործելու իրաւունքը, երբ Եւրոպան կը համոզվի, որ թիւրքերը անուղղելի են։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 18 յուլիսի

Երէկ կայարանում յարձակման ենթարկված թուրքը, ինչպէս այժմ պարզվում է, ոստիկանական գործակալ է՝ եկած Ուսկիւբից. նա ունէր մօտը մի տարձանակ, տոմսակ՝ սերբական երկաթուղիներով ձրի ճանապարհորդելու համար։ Նրա կարգը անվտանգ է։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 18 յուլիսի

Մինիստրները գնացին ներկայ լինելու Տրընօվո-Պլաչկովցի գծի բացմանը։ Լուսաւորութիւն տարածող մակեդոնական ընկերութիւնը որոշեց յուզարկել թիւրքական բռնութիւնների դէմ լինելիք բողոքի միտինգը՝ կիրակի օրվան, որպէսզի կարողանայ աւելի մանրամասն և ստուգված տեղեկութիւններ հաւաքել օտտոմանեան բոլգարների իսկական դրութեան մասին։ Ընտրվել է երկու կոմիսիա, որոնցից առաջինը պիտի նախաձեռնի մի շարք խորհրդակցութիւններ կազմելու քաղաքական զեկավարների հետ, որպէսզի միջոցներ գտնեն վերջ դնելու Մակեդոնիայի ներկայ ծանր դրութեան, հեռու մնալով հայդուկային գործունէութիւնից։ Երկրորդը կոմիսիաներից պիտի կազմի բոլգարների վրա գործ դրված ճնշման դէպքերի ցուցակը, մանրաման տեղեկագրի հետ, որը պիտի ներկայացվի բոլգարական կառավարութեան և մեծ պետութիւններին։

Ուսկիւբեցի մի բոլգար վիրաւորել է մի թիւրքի, կասկածելով՝ որ նա է սպանել իր եղբօրը և հօրը Մակեդոնիայում։ Բոլգարին ձերբակալել են։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 17 յուլիսի

Ժողովուրդը շարունակում է պնդել իր պահանջը՝ մուշտէիդի սպանողներին գտնելու համար։ Կատարված են մի քանի կալանաւորութիւններ, որոնց թւում, ինչպէս ասում են, մի քանիսը մասնակցութիւն են ունեցել սպանութեանը։ Թաղի-զադէն հեռացաւ Թէհրանից։ Ժողովուրդը պահանջում է Պարսկաստանից հեռացնել նաև Թաղի-զադէի հավատակիցներից մի քանիսին, որոնք նորերս նշանակված են մինիստրներ։ Սաստիկ զայրոյթ է նկատվում Սարդար Ասադի դէմ, որը ամբողջապէս ենթարկվել է ծայրայեղ նացիոնալիստների ազդեցութեանը։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 18 յուլիսի

Մինիստրները մէջլիսում պարզեցին նոր կաբինէտի ծրագիրը, որը պարունակում է իր մէջ հետևեալը. օտարերկրեայ խորհրդականներ հրաւիրել, մայրաքաղաքում ուժեղ զօրամաս ստեղծել, կանոնաւորել դատաստանական հաստատութիւնները՝ ստեղծելով միաժամանակ վճռաբեկ դատարան։ Պատգամաւորների կողմից տրված այն հարցապնդումին, թէ ինչ վերաբերմունք ունի կաբինէտը օտար զօրքերի ներկայութեան մասին երկրի մէջ, արտաքին գործերի մինիստր Նօվմաբը հաւատացրել է մէջլիսին, որ ռուսական զօրքերի հեռանալը երկրից տեղի կունենայ մօտիկ ապագայում և որ ինքը մտադիր է բանակցութիւններ սկսել այդ առիթով ռուսական դեսպաթեան հետ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորից հրապարակ նետվեց ուսանողական կասայի խնդիրը և նախկին ուսանողներ՝ իսկ այժմ դիպլօմաւոր՝ «կոտր» ընկած պարտականների հարցը...

Ամեն անգամ, երբ դառն զանգատներ ենք կարդում անպարտաճանաչ դիպլօմաւորների մասին, իսկոյն միտս է ընկնում Թիֆլիսի փողոցներում մեն եկող գաթա ծախող կոյրը իր կնոջ հետ միասին. այս մարդուն անշուշտ մեզանից շատերն են ճանաչում իր օրիգինալ գոչումների առիթով. «Տաք-տաք գաթաներ, անուշ գաթաներ, ուտողը գիտէ, չուտողը ինչ գիտէ»...

Ահաւասիկ այդ համեստ, խեղճ ու կրակ մարդու կեանքից մի օրինակ, որին արձանագրելու բաւականութիւնից չենք կարող մեզ զրկել։

Այս մարդը իր կնոջ հետ եկած է գաւառից, կարծում ենք Ախալքալաքից, 5—10 տարի առաջ կուրացած, և դիմել է Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ օգնութեան, որտեղից ստացել է 10 թէ 15 ր.։

Ահաւասիկ այս փողերով այդ խեղճ աժուսինները սկսում են գաթա պատրաստել և ծախել. մի քանի ժամանակից յետոյ այդ զոյգը նորից է այցելում Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակը, սակայն այս անգամ ուրիշ նպատակով. նրանք բերել են և վերադարձրել իրանց ստացած գումարը շնորհակալութիւններով հանդերձ և խնդրել, որ մի ուրիշին տան և այդպիսով մի ուրիշ խեղճի ոտքի կանգնեցնեն...

Արդեօք, մենք իրաւունք չունինք այդ օրն ի բուն փողոցում «տաք-տաք գաթա» բղաւողին գերազանց դասել այն մի շարք գիպլօմաւորներից, որոնք իրանց ընկերների կասայի փողով օգտվելով և այսօր չաղչաղ՝ առճիկներ կամ եկամուտներ ստանալով՝ նամուս չունեն վերադարձնելու իրանց պարտքը. գոնէ ամաչեն վերև յիշած գաթա ծախող կոյրից, որին տրված օգնութիւնը Կ. Հ. Բ. Ընկ. կողմից ոչ թէ պարտք էր, այլ ողորմութիւն, սակայն նա պարտք է համարել և նորից վերադարձրել։

Շերին

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳՈՐԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ

Դուս անտեսական կեանքի երևոյթները ուշիմ արձանագրող Մէվերնանինը (կեղծ-

անուն), վերջերս այցելելով մեր երկիրը, երբեմնակի «Рус. Вѣд.» լրագրում տալիս է իր ճանապարհորդական դիտողութիւնները։ Նրա վերջին գրուածքը («Р. В.» № 156), «Առասպելական հարստութիւններ և ներկայ չքաւորութիւնը», հետաքրքրական և ուսանելի է, բայց նրանից մենք բերում ենք մի կտոր մեր գորգագործութեան մասին, ի լրումն մեր աշխատակցի հաղորդածին Բերլինից («Մշակ» № 151)։

«Մոտոր արդիւնագործութիւնը Կովկասում (ի բաց առած նաւթայինը, ի հարկէ) շնորհիւ զանազան պատճառների, որոնց պարզելը այստեղ տեղը չէ, զարգանում է շատ դանդաղ կերպով։ Եւ ժողովրդական անտեսութեան մէջ մինչև այժմ գերիշխող հողագործութիւնից և անասնապահութիւնից յետոյ յիշելու է զանազան մանր արդիւնագործութիւններ, որոնք զարգացած են որոշ շրջաններում։ Դրանցից ամենանշանաւորն է գորգագործութիւնը։ Կովկասեան գորգերը արդէն լաւ յայտնի են, և աւելորդ է խօսել նրանց արժանաւորութեանց մասին։ Բաւական է ասել, որ նրանց մշտական պահանջը զոյութիւն ունի անգամ Ամերիկայում։ Պէտք էր կարծել, որ մեր կառավարութեան համար հեշտ պիտի լինէր աւելի զարգացնել մի այդպիսի գործ, ցոյց տալ առաջադիմութեան նշաններ։ Տեսէք սակայն ինչ հիմքեր ունի այն արդիւնագործութիւնը, որ տարեկան արտադրում է քանի միլիոնի ապրանք։ Իմ առաջն է մի բրօշիւր՝ «Գորգագործութեան արդիւնագործութիւնը Երևանի նահանգի քիւրդական գաւառներում»։ Թէև գրքոյկը հրատարակված է 1903 թուին, սակայն լաւատեղեակ մարդիկ ասում են, որ հիմնական թիւրը մինչև մեր օրերը քիչ են փոփոխվել։ Հեղինակը, հենված բազմաթիւ վիճակագրական տեղեկութիւնների վրա, հաստատում է, որ գորգ գործող քիւրդ կանանց օրական միջակ վարձը հաւասար է 3—4½ կոպ. 6-ժամեայ աշխատանքի համար։ Նոյն գրքոյկը հաղորդում է հետաքրքրական կենցաղական գծեր. օրինակ, որ բոլոր ուսումնասիրութեան ենթարկված գիւղերում չը կար գէթ մի գրագէտ քիւրդ։ Հեղինակի եզրակացութիւններն են.—գորգագործութիւնը զարգացնելու համար անհրաժեշտ են հիմնել պահեստներ, բանալ գիւղական մանր կրեդիտ (վարկ), տարածել լաւ օրինակներ, կազմակերպել առուծախը առանց միջնորդների օգնութեան, ստեղծել հրահանգիչների կազմ, մի խօսքով այն ամենը, ինչ անում է Ռուսաստանի ներքին նահանգների զեմստվոն՝ Պերմում, Վեատկայում, Մոսկվայում տնայնագործութեան համար։ Մեր յիշած գրքոյկը հրատարակել է պաշտօնական մարմին՝ Կովկասեան Տնայնագործական Մասնաժողովը արդէն 7 տարի սրանից առաջ։ Սակայն ինչ չափով է իրականացված այդ բարի ծրագիրը։ Ինչ է արվել այս 7 տարվայ ընթացքում գորգագործութեան համար։ Ոչինչ կամ գրեթէ ոչինչ։ Ճիշդ է, ներկայումս Կովկասեան իշխանութիւնը զբաղված է մանուածքի, թելի որակութիւնը լաւացնելու ծրագրով։ Հաստատ է, որ ձեռքով պատրաստված թելը իր պակասութիւններով ՊՏասում է ստացված ապրանքի գներին։ Ահա թէ ինչու վճռել են հիմնել մի ֆաբրիկա—թել մանող և ներկող—որ պիտի գորգագործներին հայթայթէ լաւ մատերիալ։ Ասում են, որ այդ գործի համար վճռված է տալ 50,000 ր., որը շուտով կը ստացվի։ Ի հարկէ նման հիմնարկութիւնը կարող է խոշոր դեր կատարել, եթէ սրա հետ միացած են և այլ նպատակայարմար միջոցներ՝ տնայնագործութեան այս ճիւղը կազմակերպելու գործում։ Բայց երբ ես տեղեկութիւններ էի հաւաքում, թէ ինչ կերպ են մտածում կազմակերպել առուծախը, գորգագործներին նպաստող մանր վարկը և այլն, ստացայ տխուր պատասխան՝ «Փող չը կայ»։ Եթէ դա այդպէս է, ապա ուշ օգտին պիտի ծառայի 50,000-անոց թելի գործարանը։ Զէ՞ որ նրանից կօգտվեն միջնորդները, քանի որ գիւղացին փող չունի կատարելագործված մանուածք գնելու, իսկ նրա օրավարձը դարձեալ մնալու է նոյնը, ինչ որ առաջ էր...

«Հետաքրքրական է, որ մինչդեռ կովկասեան իշխանութիւնը ահա 7 տարի ճգնում է իրականացնել այն միջոցները, ինչ որ վաղուց արել է Ռուսաստանի զեմստվոն իր տնայնագործների համար, եւրոպացիները Պարսկաստանի և Թիւրքիայի զանազան անկիւններում հիմնել են գորգի մեծ գործարաններ։ Մթթէ նման պայմաններում հարց կարող է ծագել, թէ որ կողմը կը տանի յաղթանակը՝ մրցութեան ասպարիզում»...

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄՈՒՄ

Մեծ բաւականութեամբ էինք կարդում Երևանի թեմական պատգամաւորական ժողովների հաշուետուութիւնը հայ լրագիրներում. կարդում էինք և մտածում, թէ ո՞րքան զգալի օգուտներ կարող է տալ հաւերաշխ, եռանդուն և անձնուէր գործունէութիւնը։ Եւ մեր խանդաշփոթ ժողովներից յետոյ, ասում եմ, մարդ անկեղծ ուրախանում էր տեսնելով ժողովների այնպիսի կանոնաւոր ընթացք, հարցերի խորը ուսումնասիրութիւն և նրանց տրամաբանական լուծումը. և այդ բոլորը կատարվում էր իրանց ընտրած երիտասարդ թեմական առաջնորդի հետ...

Կարդալուց յետոյ՝ Աստրախանից մարդուս մէջ մի տեսակ նախանձ էր առաջանում։

Իսկ մենք... մեր թեմը... մեր կարիքները...

Այո, մեր թեմը ևս կարօտում է մի այդպիսի կանոնաւոր թեմական պատգամաւորական ժողովի. մեր թեմը ևս ունի բազմաթիւ դպրոցական-վարչական-հոգևոր ըղձալի կարիքներ, կարիքներ՝ որոնք անհամբերութեամբ սպասում են իրանց լուծմանը պատգամաւորական ժողովի կողմից։

Բազմիցս անգամ աւելի եմ ունեցել հրապարակի վրա դնելու «Մշակի» էջերում մեր ողբալի թեմական դպրոցի դրութիւնը, սակայն այն օրից ոչինչ չէ փոխվել, նրա դրութիւնը աւելի վատացել է՝ քան լաւացել։

Դպրոցի կանոնադրութիւնը էջմիածնում ձգձգվելուց յետոյ՝ այժմ Պետերբուրգումն է ձգձգվում, և ոչ մի լուր նրա հաստատման մասին։

Դպրոցը կառավարող յանձնաժողովը հրաժարված է, ուսուցչական խումբը արձակված... օրերը անցնում են, օգոստոսը արդէն բթներիս տակին է, և ոչ ոք չէ մտածում այդ դպրոցի մասին։

Բացի դրանից՝ Աստրախանի լայնածաւալ թեմը բաժանվում է մի քանի մեծ մասերի՝ Անդրկասպեան երկիր, Հիւսիսային Կովկաս և Ռուսաստան, որոնք ենթարկվում են ուրոյն օրէնքների, կանոնների և այդ հիման վրա թեմի մի մասում ծխական դպրոցներ բանալ թոյլատրվում է, իսկ Աստրախանում ոչ. և ահա չորրորդ տարին է, որ փակված է տեղիս հայոց օրիորդաց ծխական դպրոցը, և երեխաները ցրված են ռուսաց դպրոցներում։

Աժան տարի անհամբերութեամբ սպասում ենք հայ դպրոցի բացվելուն, սպասում ենք, որ դպրոցական հարցով զբաղվող զանազան յանձնաժողովները մտածեն նաև Ռուսաստանի թեմերի մասին, բայց գալիս ենք այն եզրակացութեան, որ մինչև թեմը ինքը չը միջնորդի, ուշադրութիւն չը հրաւիրի իր դրութեան վրա, մեզ շատ սպասեցնել կը տան...

Մինչև ե՞րբ պէտք է շարունակվի այդ դրութիւնը։ Ահա, մեր կարծիքով, այն կարևոր դպրոցական հարցերը, որոնք պէտք է դրված լինեն պատգամաւորական ժողովի առաջ, դեռ չեմ խօսում այնքան մեծ նշանակութիւն ունեցող՝ թեմական խորհրդի, թեմական տեսչի և թեմի միւս բոլոր երկրորդական հարցերի մասին։

Եւ ո՞վ պէտք է այդ բոլոր հարցերի արդարացի լուծումը տայ, եթէ ոչ թեմը՝ իր արժանաւոր և եռանդուն ներկայացուցիչների միջոցով։

Ուրեմն շտապենք ունենալ այդպիսի թեմական պատգամաւորական ժողով։

Ս. ք. Ասլանեան

Աստրախան

ՄԻ ՏԽՈՒՐ ԷՋ ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻ ՄՕՏ ԱՆՑԵԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Վրաց կեանքն էլ ունեցել է իր խոշոր կորուստները, որոնց անյայտացումով գոյացել է մի խոշոր բաց, որպիսին ծածկելու համար՝ գեռևս այդ կեանքը չէ ծնել իր միջից հարկաւոր ոյժեր, թէև վրացիների մէջ մենք հանդիպում ենք աւելի ստուար թիւով անձնուէր գործիչների հասարակական կեանքի ամեն ասպարէզներում, որոնք համոզված ժեստով և մարդկային հոգու լաւագոյն յատկութիւններով ամբողջ թափով աշխատում են հնար եղածին չափ բարւոքել անթիւ ցաւ ու դարդերով լեցուն այդ կեանքը, որպիսի մտքով էլ մենք բաղմիցս «Մշակի» էջերում տուել ենք մեր խորհրդածութիւնները։

Քաջ ծանօթ լինելով մեր եղբայրակիցների կեանքի բոլոր ելևէջների հետ, մենք շատ անգամ համեմատելով մեր և վրաց իրականութիւնները՝ միշտ եկել ենք այն ուրախացուցիչ եզրակացութեան, որ վրաց ինտելիգենցիան, հասարակութիւնը աւելի սրտով են կպած վրացի ժողովրդի վերածնութեան, կուլտուրական առաջխաղացութեան մեծ գործին, քան մենք հայերս։

Առածներիս իբրև ապացոյց կարող են ծառայել Վրաց Մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան արդիւնալից գործունէութիւնը, Վրաց Դրամատիկական Ընկերութեան թափած անբաւ ճիգն ու ջանքը՝ իր կատարելութեան հասցնելու թատրոնական գործը, Վրաց Ֆիլարմոնիական Ընկերութեան գեղեցիկ գործունէութիւնը և այլ բազմապիսի ու այլևայլ նպատակների ծառայող հասարակական հաստատութիւնների ու մամուլի օրգանների գովելի ձգտումը, որոնցով աշխատում են ամեն ինչ, որ հասարակութեանը օգտաւէտ է, հասցնելու իր կատարելութեան գագաթնակէտին...

Բայց մեր խօսքը շատ ընդհանրացաւ ու մենք ակամայից շեղվեցինք մեր ներկայ յօդուածի սահմաններից։

Այս անգամ մեր խօսքը վերաբերում է կորած մի խոշոր դէմքի, որը 12 տարի է արդէն, մեր արդի գրականութեան նախահայր Խ. Աբովեանի նման, անյայտացել է։

Այդ անձը յայտնի հասարակական գործիչ, Շէքսպիրի և Եւրոպական այլ գրողների տաղանդաւոր թարգմանիչ Իվանէ Մաչաբէլին է, որը 1898 թուի յունիսի 26-ին տանից դուրս գալով՝ դեռ մինչև այժմ էլ չէ վերադարձել... Ո՞վ էր սակայն Իվանէ Մաչաբէլին, որի կորստի վերյուշումն անգամ խոր կսկիծ է արթնացնում իւրաքանչիւր սրտացաւ ու բանիմաց վրացու մէջ։

«Սա մի անուն էր, որը յիշելով մարդս իր առաջ ներկայացնում է աննկուն աշխատողի, մտքով անապակ և բարոյական ըսպիտակութեամբ, մաքրութեամբ փայլող մի մարդու, եւրոպական կրթութեամբ ու գիտութեամբ լցված մի քաղաքացու, հայրենիքի անձնուէր որդու և վրաց թատրոնի զարգացման սիւներից մէկին». այսպէս է բնորոշում իր «Թէատրի դա Ֆիսօվրէբա» (Թատրոն և կեանք) թերթում վրացի երիտասարդ գրող Իսէբ Իմէդաշվիլին Իվանէ Մաչաբէլիին։

Ծագումով իշխանական տոհմին պատկանելով, նա սակայն հեռու էր գլխովին ծագմամբ ազնուական այն անբովանդակ ու անիմաստ կեանք վարողներից, որոնք օրն ի բուն մտածում են միայն քէֆի ու վայելքների մասին և պատրաստ աշխատածն անխնայ կերպով վատնելուց բացի՝ կեանքի այլ նպատակ չունեն...

Իվանէ Մաչաբէլիի և նրա համախոհների դարը, վրաց կեանքի, այդ ազգի զարթօնքի փոքր ոսկեդար կարելի է անուանել, որովհետև փոքրաթիւ այդ մարդկանց անդուլ աշխատանքը կարողացաւ ստեղծել մի դաբաշրջան, սկիզբ դնել մի գեղեցիկ գործի, որը այսօր շարունակվում է նրա համախոհների և յաջորդների ձեռքով։

Իվանէ Մաչաբելին ծնվեց Գօրու գաւառի Թամարաշէնի գիւղում. նրա հայրը ազգատ կալուածատէր ազնուականներից էր, իսկ մայրը, ազգով հայ, Երևանցիների ազգիկը։

Ահա վրացական և հայկական այս խառնուրդից, 1854 թուին, ծնվեց նա, որ ապագայում պէտք է դառնար վրաց խոպան կեանքի ամենառանդուն հերկողներից մէկը։

Սկզբնական կրթութիւնը ստանալով տանը և կարդալով վրաց դասական ու նոր-բագոյն գրականութիւնից ընտիր գրքեր, նա եօթն տարեկան հասակում ծնողների առաջնորդութեամբ Թիֆլիս եկաւ, իսկ 9 տարեկան հասակում մտաւ Թիֆլիսի առաջին արական գիմնազիան, որը աւարտեց 16 տարեկան հասակում։ Մի տարի մնալով իր հայրենի գիւղում (որովհետև տարիքի փոքրութեան պատճառով համալսարան չընդունվեց), նա 17 տարեկան հասակում մտաւ Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը և 1874 թուին աւարտելով՝ անցաւ Եւրոպա, ուր նախ Շտուտգարտի և ապա Տիւբինգէնի համալսարաններում սովորում էր գիւղատնտեսութիւն, որտեղից գնաց Ֆրանսիա՝ այդպիսի գործունէութիւն ուսումնասիրելու համար։

Եւրոպայում նա սովորեց եւրոպական մի քանի լեզուներ և գլխաւորապէս անգլիերէն և, ապա նորից Պետերբուրգ գալով, զբաղվեց հասարակական գործերով, ուր և ծանօթացաւ [illegible] հետ միասին թարգմանեց Շէքսպիրի «Արքայ Լիրը»։

Նոյն տարին վերադարձաւ Վրաստան և սկսեց հասարակական գործերով զբաղվելու. և գլխաւորապէս նուիրվեց վրաց թատրոնի և լրագրութեան գործին, որպիսի զբաղմունքը, ժամանակակից բարձր դասակարգին պատկանող վրացիների կարծիքով, «անգործնեբի» պարապմունք էր համարվում։

Մի առ ժամանակ վարելով «Դրօէբա» թերթի խմբագրի պաշտօնը, Ի. Մաչաբէլին հրաւիրվեց վրաց ազնուականութեան գիմնազիայի տեսչի պաշտօնով, իսկ վերջը դարձաւ վրաց ազնուականութեան բանկի դիրեկտոր։

Բացի այս բոլորից, նա վարեց և մի շարք այլ պաշտօններ, գլխաւորապէս զբաղվելով թատրոնական և գրական գործերով։

Ի. Մաչաբէլին որպէս Շէքսպիրի թարգմանիչ, պէտք է նկատել, որ անզուգական է այդպիսիների շարքում։ Նա թարգմանել է բացի «Արքայ Լիրից» և «Հալէտը», «Օտէլօն», «Մակբէթը», «Ռիչարդ III-ը» և այլն։ Վրաց բոլոր թերթերի վկայութեամբ, յանձին Ի. Մաչաբէլիի, վրաց հասարակութիւնը կորցրել է իր մեծ և լաւագոյն որդիներից մէկին։

Դ. Իմէդաշվիլին Ի. Մաչաբէլիին նուիրած ազդու յօդուածը վերջացնում է Շէքսպիրի հետևեալ խօսքերով. «Իսկ նա... մարդ էր որպէս վայել է մարդկութիւնը մարդուն...»։

Յաբ. Դասպարեան

Կ. ՀԱՄՍՈՒՆԻ 50-ԱՄԵԱԿԸ

Փոքրիկ ազգերը պարծենում են իրանց տաղանդների մեծութեամբ։

Այդ ազգերից մէկն է Նորվէգիան, որի անուան հետ կապում է մեզ և մեր հոգեկան աշխարհն՝ իր ամենանուրբ և ամենազգայուն թելերով՝ Կ. Համսունի տաղանդաւոր գրիչը։

Կնուտ Համսուն։

Մանկութեան օրերի այդ խաչնարածը, բնութեան գաղտնիքների սիրահարը, մարդկային կեանքի խորթութիւններից հալածված զաւակը և «Բաղցի» տաղանդաւոր երգիչն այսօր կարող է պարծենալ և ասել, որ ինքն էլ, իր կեանքի փորձութիւնների արեան իւրաքանչիւր կաթիլներից հիւսած սքանչելի գրուածքներով, կարողացել է գրաւել համաշխարհային գրականութեան մէջ մի համեստ անկիւն։

Նա, ով ծանօթ է ռուսաց նորագոյն գրականութեան հետ, կամ նա, ով ուզում է հետաքրքրվել նրա իմաստով, նա չէ կարող լուութեամբ անցել Կ. Համսունի մօտով։

Դրա գրուածքները, որ տասնեակ հազարաւոր և նոյնիսկ միլիոնաւոր օրինակներով հեղեղել է լայնածաւալ Ռուսաստանը մի ծայրից մինչև միւսը, կարողացել են գրաւել Ռուսաստանի երիտասարդութեան հոգին։

Այնտեղ է գտել նա իրան տանջող մտքերի կատարեալ բացատրութիւնը և զգացել կեանքի յուսահատական ամենածանր ըսկէներում լիառատ մխիթարութիւն...

Եւ հայ երիտասարդութիւնը, ով միայն յետ չէ մնացել այդ նորագոյն գրականութիւնից, նոյնպէս զգացել և տանջվել է թէ հեղինակի և թէ նրա գլխաւոր տիպերի հետ միասին։

Նրա տաղանդաւոր գրիչը, իր հոգեբանական սուր դիտողութիւններով, կարողացել է բաց անել ընթերցողների առաջ այնպիսի երևոյթներ և պատկերներ, որոնց առնորոշութեան մէջ շարունակ տանջվել է մարդկային անհատը և նրա անհատականութիւնը։

Նրան սիրել են բոլորը, սքանչացել՝ նրա ամեն մի պատմուածքը կարդալուց յետոյ և կարճ, շատ կարճ ժամանակում գարձել է նա համայն Ռուսաստանի մարտնչող երիտասարդութեան սիրելին։

Եւ ահա այդ հեղինակի ծննդեան 50-ամեակն է, որ ամսիս 22-ին տօնելու է Նորվէգիան։

Կ. Համսուն։

Յիշելով այդ անունը, դու չես կարող անմիջապէս չը կապվել բնութեան գեղեցկութեան հետ, որ այնքան պարզ և կենդանի գծերով արտացոլվել է նրա գրուածքների մէջ։

Կարդալով նրա ամեն մի հատուածը, դու կամայ-ակամայ զգացել ես անտառի քաղցր մեղեդին, հոտ ես քաշել այն ծաղիկներից, որոնք նկատվել են նրա ամեն մի տողի և նոյնիսկ ամեն մի բառի մէջ։

Որպէս մի ճանապարհորդ, դու էլ նրա հետ միասին շրջել ես աշխարհիս 5 մասերը. վերջապէս եկել ես Կովկաս, Թիֆլիս, անցել ես Շէյթան-Բազարը, տեսել այնտեղի կեղտոտութիւնները, այն ծոյլ ձիուն, որը չէ ուզեցել մի քանի քայլ անել դէպի մօտակայ շուաքը և չը մատնել իրան արևի տապակող ճառագայթներին...

Այո, տեսել և զգացել ես այդ բոլորը, նստած՝ քո առանձնասենեակում։

Այդքան ուժեղ է նրա գրիչը և այդքան պատկերաւոր նրա նկարագրութիւնները...

Կրկնելով մեր ժողովրդի առածը, թէ՝ «ով մի անգամ ճաշակել է Կուրի ջուրը, նա Թիֆլիսին մոռանալ չէ կարող», բացագանչում է իր „Въ сказочной странѣ“ պատմուածքում.

«Այո, իսկապէս որ նա, ով մի անգամ հաճակել է Կուրի ջուրը, երբէք մոռանալ չէ կարող, և ես, ով անմոռանալ կովկաս, գիտցիր, որ հեռանալով քեզանից՝ բեզ չը մոռացողներից մէկն էլ ես եմ լինելու»։

Իսկ որպէս պատասխան նրա այդ անկեղծ բացագանչութեան՝ մենք էլ կարող ենք ասել.

— Նա, ով մի անգամ զոնէ կարողացել է կարդալ նրա գրուածքները, նա չէ կարող մոռանալ այն տաղանդաւոր երգչին, որի անունն է՝ Կնուտ Համսուն։

Հեռաւոր այս ծայրից՝ ուղարկում ենք նրա հազագիւտ յօբելեանին մեր սրտագին ողջոյնները և բարեմաղթում այնպիսի աջողութիւններ, որպիսին կը ցանկայ նրա մտալից, սակայն գեղարուեստական հոգին*)։

Մ. Ադեան

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԶ ՄՕՏ**)

II

Մեզ համար շատ ցաւալի էր նկատել բէլիտական մարքսիզմի կողմնակից B. Lucifer-ի մօտ այն սխալը, որը, որպէս մենք շեշտեցինք անցեալ անգամ, կազմում է բնորոշ յատկութիւնը հայ քննադատութեան։

Ցաւալի էր, որովհետև հեղինակի նախկին գործունէութիւնը և նախկին արտադրութիւնները մեզ իրաւունք էին տալիս սպասել նրանից աւելի խոր վերաբերմունք. նրա գրքոյկը վերջապէս, ուր քիչ չեն խոր մտքերը, մեծ չափով կորցնում է շնորհիւ հէնց այդ շշոված սխալի։ Բայց անցնենք յօդուածին։ B. Lucifer-ը, որպէս յայտնի է, հրատարակել է մի գրքոյկ, ուր քննում է «աշխատանքի մօտիվները Ադա Նէգրիի, Յակոբ Յակոբեանի և Շ. Կուրդինեանի բանաստեղծութիւնների մէջ»։ Այդ թէման մօտենում է քննադատութեան այն ձևին, որ մենք վերը անուանեցինք սոցիոլոգիական, հասարակագիտական։ Իւրաքանչիւր հեղինակի մօտ մենք կարող ենք գտնել որոշ մօտիվներ, որոնց քննութիւնը այսպէս թէ այնպէս շօշափում է և հեղինակի հասարակական աշխարհահայեացքը, նրա դասակարգային իդէօլոգիան։ Աշխատանքի մօտիվները այդպիսի մօտիվներից են։ Այդ լաւ գիտէ B. Lucifer-ը և դրա համար էլ նա չէ բաւականանում միայն նրանց բանաստեղծութիւնների ցամաք տեսութեամբ, այլ ընորոշում է նաև նրանց ստեղծագործութեան էական էլեմենտները, որոշում է նրանց հասարակական համակրանքները, նրանց դասակարգային իդէօլոգիան։ Որքան ճիշդ է B. Zuciter-ի վերլուծութիւնը առաջին երկու պօէտների վերաբերեալ—այդ թողնում ենք։

Այստեղ մեզ հետաքրքրում է Կուրդինեանի ստեղծագործութեան քննութիւնը և միմիայն այն չափով՝ որ չափով այդ քննութիւնը կողմնակի կերպով շօշափում է և մեր թեման։ Իսկ այդ տեսակէտից մեզ համար անշուշտ աւելի կարևոր է նրա յօդուածը «Մշակում» Credo-ի դէմ։

Նախ և առաջ թող թոյլատրվի մեզ այստեղ երկու խօսք ասել յօդուածի արտաքին յատկութիւնների մասին։ Մեզ թւում է՝ այստեղ էլ B. Lucifer-ը պիտի յիշէ, որ դրութիւնը ստիպում է (положеніе обязываетъ). այն, ինչ որ թոյլատրելի է մի բուրժուական քննադատի համար, նոյնը չէ կարող միշտ բնական լինել և մարքսիստի համար։ Այն-ինչ նրա յօդուածը ունի մի քանի ցաւալի կողմեր, որոնք այլ բնաւորութիւն են տալիս նրա յօդուածին։ Մեզ շատ տարօրինակ է թւում B. Lucifer-ի չափազանց «գալանտ» դիրքը Կուրդինեանի նկատմամբ և նրա աւելի քան անկօրեկտ վերաբերմունքը դէպի իր հակառակորդները։ Կարելի է չը համաձայնվել, բայց ինչո՞ւ այդքան խիստ, կոպիտ... «լովկի մախինացիաներ», «միտուաւոր կոմբինացիաներ», «աչքակապութիւն», «ի հարկէ մենք չենք մեղադրում Credo-ին, որ չէ կարողացել թափանցել մեթոդական նուրբ տարբերութիւնների խորքը. բայց իրաւունք ունենք պահանջելու, որ նա խոհեմութիւն ունենայ չը հասկացած խնդիրների մասին մեծ ապլոմբով չը բրբելու»—այդ բոլորը ասվում է Credo-ի մասին։ Մենք չենք կանգնում մեղադրել էպիտետների վրա, մանաւանդ այն էպիտետների վրա, որոնք արտայայտված են Սխ. Բաբիեանի վերաբերեալ։ Մեզ թւում է, թէ այդ բոլորը չափազանց հեռու է յօդուածի անմիջական նպատակից, և, կըրկնում ենք, յիշեցնում է ակամայից ըմբշամարտը։ Չենք կանգնում նաև մենք հեղինակի մի քանի անորոշ արտայայտութիւնների վրա, թէև նրանք անշուշտ անպակն նշանակութիւն ունեն. օրինակ, ի՞նչ է նշանակում՝ «միւս քննադատները մատեցել են հարցին գլխաւորապէս գեղարուեստական վերլուծութեան մեթոդով, բնորոշելով բանաստեղծութիւնը հիւսուածքի մօտիվներ»։

Հետևաբար գեղարուեստական վերլուծութեան մեթոդ նշանակում է բանաստեղծի հիւսուածքի մօտիվների բնորոշումը, այդ է ըստ երևոյթին հեղինակի միտքը. բայց ի՞նչ է ցանկանում դրանով B. Lucifer-ը ասել։ Կրկնում ենք՝ մենք շօշափում ենք այդ անորոշութիւնը, որը թերևս շատ գրելու և այլ լուրջ պատճառների շնորհիւ է առաջացել, որովհետև դա խանգարում է յօդուածի ըմբռնմանը, այն-ինչ այդտեղ շօշափվում է շատ կարևոր խնդիր։

Ինչ և իցէ, անցնենք անմիջապէս հեղինակի հայեացքներին Կուրդինեանի մասին։

Մի քննադատ, ըստ էնքեան Ա. Ս., նկատել է B. Lucifer-ին, որ նա «գիտակցաբար արհամարհում է զուտ գեղարուեստական տեսակէտը»։

«Եթէ ես շօշափել եմ,—պատասխանում է դրան B. Lucifer-ը,—բանաստեղծական արտադրութիւնների միայն գաղափարային կողմը, դա չէ նշանակում, որ արհամարհել եմ գեղարուեստականը»։ Այդ ի հարկէ ճիշդ է. անշուշտ Ա. Ս.-ն սխալ է մեղադրում Lucifer-ին, բայց, թւում է մեզ, Ա. Ս.-ն իրաւունք ունէր այդ սխալը անելու, որովհետև B. Lucifer-ը եթէ որոշակի չէ արհամարհում գեղարուեստական կողմը (յիշված յօդուածում, նա որպէս տեսանք, նոյն իսկ պնդում է հակառակը), այնուամենայնիւ նա այդ կողմը խառնում է հասարակական-իդէական կողմի հետ և դրա համար ի հարկէ այնքան էլ հեռու չէ գնում «արհամարհանքից»։ Մենք այդ տեսնում ենք աւելի քան պարզ, երբ քննում ենք նրա գովաբանական խօսքերը Կուրդինեանի մասին. հէնց այդ յօդուածում այդպիսի խօսքեր տարբեր դասաւորութեամբ կրկնվում են մի քանի անգամ։ «Երկու տարվայ ընթացքում գտել է շատերի համար նախանձելի հմայք». անշուշտ ասելով այդ, B. Lucifer-ը համարում է ապացուցված Կուրդինեանի գեղարուեստական մեծութիւնը. բայց անցնենք առաջ. մենք ունենք այդ մասին աւելի որոշ արտայայտութիւններ B. Lucifer-ի մօտ։

«Եւ նա (խօսքը Բաբիեանի մասին է) դեռ յաւակնութիւն ունի քար նետելու այն բանաստեղծուհու հասցէին, որ իր լաւագոյն հիւսուածքների նիւթը վերցրել է կենդանի իրականութեան ծոցից, կուող, բաղխող մարդկանների ցոլքերից, կեանքի ու մահվան յարաշարժ պայքարի խորհրդաւոր վայրկեաններից։ Կուրդինեանը իր գրիչը ծառայեցնում է մարդկային քաղաքացիական շահերին. ասել է՝ նա արուեստին տալիս է հասարակական արժէքաւորութեան օբիէկտիվ կոչում ու նշանակութիւն։ Իսկ զանազան Բաբիեաններ, ընդհակառակը, արուեստը ծառայեցնում են արուեստին, դարձնելով սուբեկտիվ տրամադրութիւնների արտայայտութեան միջոց»։

Արդէն այդ հակադրութիւնը ցոյց է տալիս, որ B. Lucifer-ը բաւական մօտ է Շահազիզի սկզբունքներին, այն սկզբունքին, որը հետևողականաբար զարգացնելով մենք գնում ենք դէպի գեղարուեստի «արհամարհանքը»։ Եւ ահա այստեղ էլ այդ սկզբունքի բացասական կողմերը իսկոյն նկատելի են դառնում. մեզ համար պարզ է

*) Կ. Համսունի կենսագրութիւնը, որ կազմել է տիկ. Մ. Գ. Բլագովեշչենսկայա հեղինակի հայրենիքում և նրա անձամբ պատմութիւնից, հրատարակում է «Զիզօվնիկը» և շուտով լոյս կը տեսնի։ Մ. Ա.

**) Տես «Մշակ» № 155.

արդէն, որ հեղինակը այնքան ոգևորված գրում է Կուրդինեանին միայն նրա համար, որ նա իր գրիչը ծառայեցնում է մարդկային-բաղաքացիական շահերին։ Դրանից յետոյ, կրկնում ենք, մեծ չափով կարելի է համաձայնել Ի. Պ.-ի հետ։ Եթէ մենք մի որևէ պօէտի կը մեծարենք, կը գովենք միայն նրա համար, որ նա ծառայեցնում է իր գրիչը քաղաքացիական շահերին, այդ նշանակում է, թէ մենք կամ արհամարհում ենք գեղարուեստական կողմը, կամ տեղեկութիւն չունենք նրա գոյութեան մասին։ Կարինեան

Պետերբուրգ

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Դիլիջան, 15 յուլիսի

Դիլիջանի սքանչելի բնութիւնը, մեղմ կլիման գրաւում են այստեղ ամեն տարի ամարաւորների մեծ բազմութիւն։ Այս տարի եկողների թիւը չափազանց շատ է և կեանքը ընդհանրապէս աշխոյժ է անցնում։ Դիլիջանն ունի ընթերցարան, իսկ բօտանդայում շաբաթը մի քանի անգամ նուագում է զինուորական երաժշտական խումբը կամ սպիական սաղմնդարը։ Մի քանի օր որանից առաջ այստեղ եկաւ դերասան Ռուսեանը, որը, ինչպէս լսեցինք, մտադիր է տալ բօտանդայի շէնքում մի ներկայացում։ Ցաւում ենք, որ ներկայացումը կը լինի գրաւիչ և հետաքրքրական ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սեւումեանը յայտնի է մեզ իբրև բարեխիղճ և լուրջ դերասան։

Հիանալի եղանակներ են մեզ մօտ։ Կայծ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԷՆ՝ ԹԱԼԱՆ

Յուլիսի 18-ի գիշերը Թիֆլիսում, Վանքի մայր-եկեղեցու մօտ տեղի ունեցած սոսկալի հրդեհի նկարագիրը թող տան ասելի կարողները. դա իմ ուժից վեր է։ Կուզէի միայն այդ հրդեհի մէջ տառապողների, գիշերվայ երկու ժամին իրանց տներում հանգիստ քնած, բայց և ամեն կողմից կատաղի բոցերով շրջապատված բնակիչների կեանքը և գոյքը վտանգից ազատել շտապող «հարեւան-բարեկամների» տուած օգնութեան վրա դարձնել հասարակութեան ուշադրութիւնը։

Պարծանքի արժանի և վերին աստիճանի սփոփիչ-մխիթարական երևոյթ է, երբ միևնոյն քաղաքում կամ գիւղում ապրող ազգաբնակութեան կէսը շտապում է օգնութեան հասնել իր հայրենակցութեան միւս կէսի նեղ օրին և ազատել նրան վերահաս վտանգից։

Եւ Թիֆլիսի հասարակութիւնը իրաւունք ունէր յուլիսի 18-ի աղէտի գիշերը պարծենալու։

Մարդիկ իրար ջարդելով վազում էին դէպի այրվող տները, երկիւղ չը կրելով կրակից, թափվում էին նրա մէջ և այրվող տներից դուրս բերում իրեր՝ լափող հրդեհից ազատելու։

Քնից արթնացած, կրակով շրջապատված և գլուխը կորցրած բնակիչները օրհնելով իրանց փրկիչների կեանքը՝ տալիս էին նրանց ձեռքը իրանց թանգագին և այլ իրերը, ամենափոքր անգամ իսկ չը կասկածելով նրանց հաւատարմութեան մասին։

Սակայն տեսարանը և «օգնողների» մասին ունեցած կարծիքը բօպէպէս փոխվեց, երբ լուսացաւ և իրերի տէրերը իրանց ձեռքով «օգնողների» ձեռքն ազատելու տուած շատ և շատ առարկաներ չը գտան Օրբելեանովսկայա, Վանքի և Կուրնայա փողոցների երկարութեամբ միմեանց վրա կուտակված անթիւ և անհամար տնային առարկաների մէջ...

Բանից դուրս եկաւ, որ օգնողների մեծ մասը եկել էր թալան անելու յատուկ նպատակով... Եւ եթէ աղէտի տեղը օգնութեան եկած զօրքը չը շրջապատէր իրերով բռնված փողոցները, թերևս շատ քիչ բան մնար դժբաղդ տէրերին «թալանչի-փրկիչների» ազատած իրերից։

Ասածներիս ճշմարտութեան մէջ համոզվելու համար պէտք էր գտնվել յիշածս փողոցներում՝ անտուն, կիսամերկ, լաց ու կոծով թափառող, իրեր որոնող յուսախաբված տառապեալների մէջ...

Ահա թէ մարդիկ ինչպէս գիտեն օգտվել իրանց հարևանի նեղ դրութիւնից։

Բ. Մկրտումեան

ԻՇԽԱՆ Վ. ԶԷՐԲԷԶՕՎԻ ԹԱՂՈՒՄԸ

Կերակի, յուլիսի 18-ին հողին յանձնեցին Թիֆլիսի քաղաքագլուխ իշ. Վ. Ն. Զէրբէզովին։

Առաւօտեան ժամը 9-ին մարմինը դուրս բերին հանգուցեալի բնակարանից քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Ի. Խատիսեանը, վարչութեան անդամ Ն. Ե. Երկայնաբազուկ-Արզումեանը, սանիտարական-ժասի տեսուչ Կ. Ն. Ստեփանեանը, դումայի քարտուղար Զաքար և միւս քաղաքներից եկած քաղաքագլուխները։ Այնուհետև ամբողջ ճանապարհին դագաղը տանում էին իրանց ուսերի վրա յաջորդաբար դումայի ձայնաւորները, քաղաքային ինքնավարութեան ծառայողները, զանազան տեղերից եկած ներկայացուցիչները։

Յուղարկաւորութեան թափորը նախապէս կազմված ծրագրով Ելիզաւետինսկայա փողոցից անցաւ դէպի Կսենիէվսկայա, Միքայէլեան ու Կիրօչնայա փողոցները։ Զուրաբլովի անուան ժողովրդական տան առջև հոգեհանգիստ կատարելուց յետոյ, յուղարկաւորը թափօրը Վէրայի կամուրջով յամրաքայլ անցաւ դէպի Գօլովինսկի պրոսպեկտը։ Առջևից գնում էր կանաչ ոստերով լի երկանիւ կառքը՝ մի ձի լծված, որտեղից մէկ-մէկ ոսա վերցնում և ցրում էին ամբողջ ճանապարհին։ Նրանից յետոյ գալիս էին, փողոցի աջ ու ձախ կողմերով, տեղական համքարները իրանց դրօշակներով, իսկ մէջտեղից քաղաքային աշակերտներն ու աշակերտուհիները, ապա զանազան հաստատութիւնների պսակակիրները՝ 61 պսակներով, որոնցից 10 արծաթի էին, դագաղի կափարիչը տանողները, հոգևորական դասը՝ վրաց ազնուականութեան երգեցիկ խմբով, դրանց առջևից երաժշտական խումբը, յետոյ այլազանան հոգևորականութեան ներկայացուցիչները, դագաղակիրները։ Այլն։ Ժողովրդի անագին բազմութիւն էր հաւաքվել Երևանեան հրապարակի վրա։ Հոգեհանգիստ կատարելով քաղաքային տան առաջ՝ թափօրը շարունակեց իր ճանապարհը դէպի Սիօնի տաճարը։ Պատարագը և թաղման կարգը աւարտելուց յետոյ ժամը 2-ին յուղարկաւ թափօրը վերադարձաւ Երևանեան հրապարակը և այնտեղից էլ գնաց Դիդուբէի եկեղեցին, ուր թաղման կարգը կատարեց Գրիգորի եպիսկոպոսը ներկայութեամբ Կովկասի Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլովի, քաղաքացիական մասի օգնական սենատոր Վառացիի, գեներալ-նահանգապետի, նահանգապետի, տեղական գործերի հրամանատարների, ադմինիստրացիայի ներկայացուցիչների, հայ և թուրք հոգևորականութեան ներկայացուցիչների և այլն։

Հանգուցեալի գերեզմանի վրա մի ճառ խօսեց Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին, իսկ նրանից յետոյ մի սրտայոյզ և գեղեցիկ ճառ արտասանեց Ա. Ի. Խատիսեանը, որը լաւ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա։

Ա. Խատիսեան իր ճառում ի միջի այլոց ասաց հետեւեալը.

«Հանգուցեալ Վասիլից Նիկոլայեվիչը քանի անգամ միջնորդել, խնդրել և աղաչել է թեթևացնելու վիճակն այն մարդկանց, որոնք այսպէս թէ այնպէս ընկել էին դժբաղդութեան մէջ։ Հէնց այս օրվանից, գերեզմանի դրան մօտ, ինձ յանձնեցին նրա անունով հեռաւոր Սիբիրից ստացված մի հեռագիր, որի մէջ յիշատակված է այն մասին, որ հանգուցեալի միջնորդութիւնը՝ թեթևացնելու բանտարկվածի վիճակը՝ յարգված է տեղական նահանգապետի կողմից»։

Ապա քաղաքագլխի պաշտօնակատարը, շարունակելով իր ճառը, ընդգծեց, որ հանգուցեալը «առաջին դեմօկրատիկ քաղաքագլուխն էր և առաջին լաւ քաղաքացին Կովկասում։ Երկրորդ գաղափարը, որ նա թողել է մեզ և որին նա ծառայում էր իր կեանքի ամբողջ ընթացքում, դա կովկասեան ժողովուրդների հաւասարաշխութեան գաղափարն էր. նա ծառայում էր այդ գաղափարին մեր կեանքի ամենածանր րօպէներում, հետևաբար և հանգուցեալը թանգարժէք է Կովկասի բոլոր ազգութիւնների մէջ՝ առանց խտրութեան»։

Թաղումը վերջացաւ ժամը 6-ին։

ԽՕՂԵՐԱ

◆ Յուլիսի 17-ին Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են և ուղարկվել բարակները. 1) Լօտկինսկայա փողոց № 1 տանը՝ Գայիանէ Անտօնովիչ Գուրգէնիձէ, 12 տ., բժշկվում է տանը։ 2) Խուդաշովսկայա փողոց № 55 տանը՝ Պիպօ Միկաշվիլի, 55 տ.։ 3) Զօրօնցովսկայա փողոց № 38—Ծովեանովի տանը՝ պարսկահպատակ Մաշադի-Հասան Ղասըմ-օղլին, 26 տ.։ 4) Սուրբ-Կարապետի ճորում № 2 տանը՝ Թիւրքահպատակ Օսման Պանօ-օղլի, 40 տ.։ 5) Աւաղեան փողոց № 15 տանը՝ Թիֆլիսեցի Ելիզաւետա Վիսարիօնովնա Պօլէյովա, 50 տ.։ 6) Կիպիանովսկայա փողոց № 28 տանը՝ Ֆէկլա Զուրաբովնա Լամիձէ, 21 տ.։ 7) Վակէում, Պօլոզովայի տանը՝ Մարիա Անդրէեվնա Սարէյովա, 21 տ.։ 8) Գլդանսկայա փողոց № 5 տանը՝ գերմանահպատակ Գէրարուդա-Նանի-Իտալիդա, 26 տ. (տընային վարժուհի)։ 9) Թէոդոսիէվսկայա փողոց № 17 տանը՝ Դիանոզ Մերաբովիչ Սաքէլիձէ, 17 տ.։ Հիւանդացածների բնակարաններում ախտահանութիւն է կատարված։

◆ Յուլիսի 18-ին խօլերային նշաններով հիւանդացել են. 1) Ելիզաւետինսկայա փողոցի № 17 տան մէջ՝ Գրիգոր Նենսկի նահանգի Պախատեվօսկա քաղաքի բնակիչ Սուրա Կենդիանօվնա Ռիժայան, 42 տ. (տանտրուհի)։ 2) Նիկոլայէվսկայա փողոցի № 7 տան մէջ՝ Թիֆլիսեցի Եվստաֆ Գէօրգիէվիչ Օկրօպերիձէն, 49 տ., որ բժշկվում է տան մէջ։ Հիւանդացածների տներում ախտահանութիւն է կատարված։

◆ Բիլլիսեն.—Յուլիսի 17-ի առ. ժամը 9-ից մինչև յուլիսի 18-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 5 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 6 հոգի։ Յուլիսի 18-ի առ. ժամը 9-ից մինչև յուլիսի 19-ի առ. ժամը 9-ը խօլերայով հիւանդացել է 1 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 2 հոգի։ Հիւանդանոցում կային 65 հոգի, աւելացել են 9, առողջացել և դուրս են եկել 17, մեռել են 4, մնում են ներկայումս 54 հոգի։

—

17 յուլիսի

Պետերբուրգ.—Մի օրվայ մէջ հիւանդացել են 83 հոգի, մեռել՝ 23, և դեռ մընում են 439։

Վերջին շաբաթվայ ընթացքում հիւանդացել են 86 հոգի, մեռել են 33 և առողջացել են 19։

Վլադիկավկազում յուլիսի 8-ից սկսած հիւանդացել են 23, մեռել՝ 10 հոգի։

Թէրեքի շրջանում հիւանդացել են 518, մեռել՝ 203։ Կէրչում հիւանդացել են 105, մեռել՝ 45։ Սամարայի նահանգում հիւանդացել են 488, մեռել՝ 210։ Խարկովի նահանգում հիւանդացել են 959 հոգի, մեռել՝ 363։ Ակկերմանում հակախօլերային պատուաստումներ են անում։ Զրհորները փակված են սանիտարական մասնաժողովի կարգադրութեամբ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ամսիս 18-ին լրացաւ անմոռանալի հրապարակախօս և մարդասէր Գրիգոր Աւետիչ Զանշեանի մահվան տասնամեակը։ Այդ առիթով Մօսկվայի հայոց եկեղեցում նոյն օրը ի յիշատակ հանգուցեալի կատարվել է պատարագ, ու ապա հայկական գերեզմանատունում հոգեհանգիստ՝ գերեզմանի վրա։ Այս օրերս «Մշակը» մի յօդուած կը նուիրի հանգուցեալի յիշատակին։

◆ Հանգուցեալ բժիշկ Ե. Աղամալեանի սպանութեան մասին չեն պարզվել նոր լուսաբանող հանգամանքներ։ Քննութիւնը շարունակվում է։ Սպանութիւնը դեռ ևս կրում է հանելուկային բնաւորութիւն։ Առաջին օրերում բերանից բերան անցնող ենթադրութիւններից շատերը հերքվում են։ Մնում է սպասել քննութեան վախճանին։

◆ Յուլիսի 18-ին, գիշերվայ ժամը 3-ին Օրբելիանովսկայա փողոցի Տելեգրաֆնի տուպիկում գտնվող № 3 տան երրորդ յարկի պատշգամբը անյայտ պատճառներից սկսեց այրվել։ Կրակը շատ կարճ ժամանակամիջոցում սկսեց տարածվել։ Վաղվեցին Կուրնայա փողոցի № № 4 և 6 ու Օրբելիանովսկայա փողոցի № № 38, 34 և 32 տները։ Հրդեհաշէջների խմբին աջողվեց հրդեհի առաջն առնել՝ միայն առաւօտվան մօտ։ Բնակիչներին իր ժամանակին դուրս բերին. մարդային զոհեր չեղան։ Հրդեհից առաջացած վնասը 200,000 ռուբլու է հասնում։ Նիւթականապէս մեծ մասամբ վնասվել են հրդեհված տների բնակիչները, որոնց ամբողջ ունեցուածքը, կարելի է ասել, հրի ճարակ է դարձել։ Խօսվում է ժողովրդի մէջ, որ պատճառած հրդեհը այդչափ հսկայական չափերի չէր հասնի, եթէ հրդեհաշէջ մեքենաներ լինէին, գոնէ երկուսը՝ փոխանակ մէկի։ Կէս ժամ առաջ օգնութեան հասած լինէր հրդեհաշէջ խումբը՝ գուցէ աղէտը սահմանափակվէր միայն մի տնով. մինչդեռ, ինչպէս ասում են, դէպքի տեղն է եկել խումբը հրդեհը բռնկվելուց մի ժամ յետոյ միայն և այն էլ բաւականին ժամանակ ստիպված է եղել չարչարվել հրդեհաշէջ մեքենան կարգի բերելու։ Իսկ մինչ այդ հրդեհը այնպիսի խոշոր ծաւալ էր ստացել, որ խումբը, հակառակ իր ցանկութեան, անկարող էր օգնութեան հասնել եօթ կողմից լափող աղաղակներին։ Ահա ներկայ հսկայական հրդեհը ի նկատի առնելով, քաղաքային վարչութիւնը պարտաւոր է հոգ տանել մի հրդեհաշէջ շոգեմեքենայ ևս բերել տալու։ Խարկովի նման քաղաքն ունի 6 այդպիսի մեքենայ. ամօթ կը լինէր Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսի համար ունենալ միայն մէկը, այն էլ անկարգ դրութեան մէջ։ Անտանելի է ու չափազանց բարբարոսական հասարակական վերաբերմունքը ևս դէպի աղէտից վնասվածները։ Հրդեհից բռնկված տներում ապրողները իրանց ունեցածները կամ-կարասիներով շտապով աշխատում էին դուրս թափել փողոցը. բաւականաչափ իրեղէններ, մինչև զօրամասերի գալը, առանց հսկողութեան լինելով, գողացվել են հասարակական տականքների ձեռքով։ Գողացվել են այն ընտանիքների բերանից, որոնք մի քանի ժամվայ մէջ աղէտի զոհ են տուել բոլոր իրանց ունեցած-չունեցածը։ Ժամանակից հասարակական կեանքից բաւական չէ չքանում են անձնազոհութեան վսեմ օրինակները, սկսում է տեղ տալ նաև կրեկցութեան տարրական զգացմունքը բարբարոսական բնազդների առաջ։

◆ Երկրագործական մինիստրութեան կովկասեան լիազօր Պ. Պ. Արխիպովը Պետերբուրգից եկել է Սօչի և այնտեղից էլ շուտով Թիֆլիս կը վերադառնայ։

◆ Թիֆլիսի արքունական պալատի կառավարիչ Օստրօվսկին ուղևորվել է Պետերբուրգ մասնակցելու եկամտային տուրքի համար օրէնքներ մշակելու նպատակով կայանալիք խորհրդակցութիւններին։

◆ Քաղաքային էլեքտրական կացարանի և նրա ցանցերի կառուցման կապալապայմանը (կօնդիցիան) արդէն պատրաստված է և առաջիկայ շաբաթվայ մէջ կուղարկվի այն անձանց, որոնք կը ցանկային այդ 575,000 ռ. արժեցող կապալը վերցնել։

◆ Յուլիսի 18-ին, երեկոյեան ժամը 6-ի ժամերը հին-Նախիջևանցի Տիգրան Կարապետեան Յովհաննիսեանը Կուր գետում լողանալիս յանկարծ գլուխը տուեց քարի։ Նրան խեղդոյն հիւանդանոց ուղարկեցին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքային ձրի լողարանից օգտվել ցանկացող կանանց համար սահմանել է առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 4-ը։

◆ Յուլիսի 17-ին Թիֆլիսում՝ շուրջկալի ժամանակ՝ ոստիկանութիւնը կալանաւորել է 65 հոգու։

◆ Մուղանի դաշտում 12,000 դեսեատին տարածութիւն ոռոգելու համար պետական գանձարանը ներկայ 1910 թ-ի իր միջոցներից յատկացրել է 121,165 ռուբլի։

◆ Ներկայ տարվայ ընթացքում Գանձակի նահանգի մէջ ստացված է 42 միլիոն պուդ պղինձ, որից զտված է 173,967 պուդ 22 ֆ., իսկ մնացեալը մնում է դեռ ևս առանց զտվելու։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ժամանակին մենք հաղորդել էինք ներկայ տարվայ մայիսի 9-ին կոզոպտիլտերբօրիատների խմբի կալանաւորութեան մասին, որը մի շարք վաճառականներից փողեր էին կորզել։ Խուզարկու ոստիկանութեան պետ Գագիէվի կատարած քննութիւնները հետևեալ նոր փաստերն են պարզում այդ խմբի գործունէութիւնից։ 1909 թ-ի գարնանը Սղնախի գաւառի Բակուրցիխէ գիւղում այդ աւազակախմբի անդամների ձեռքով սպանվեց թէլաւեցի Յովսէփ Մինասեվիչ Մամուլօվը այն պատճառով, որ նա չենթարկվեց նրանց պահանջին և չը վճարեց 50,000 ռուբլի, որը քանիցս պահանջել էին նրանից։ Մամուլօվի սպանութիւնից յետոյ նոյն պահանջով նրանք դիմեցին նրա միակ ժառանգ քրոջ-որդուն—թէլաւեցի Նիկոլայ Մարգարովիչ Մարգարովին, որը ապրում էր Ծղնէթսկայա փողոց № 3 տանը, սպառնալով հակառակ դէպքում սպանել։ Մարգարովի մօտիկ ծանօթ հանգուցեալ Միքայէլ Տէր-Մխիթարեանը վրդովվեց դրամաշորթների յանդգնութիւնից և ամեն կերպ աշխատում էր համոզել Մարգարովին, որպէսզի նա չը վճարի այդ պահանջված 50,000 ռուբլին. բաւական չը համարելով այդ, նա անձամբ յայտնեց դրամաշորթներին, որ փողը չեն վճարելու։ Ցանձին Միքայէլ Տէր-Մխիթարեանի նկատելով գլխաւոր պատճառը փողը չը վճարելու, դրամաշորթները դայրացան նրա վրա և անցեալ տարի դեկտեմբեր ամսին ատրճանակի մի քանի հարուածներով սպանեցին նրան։ Սակայն այդ սպանութիւնից յետոյ էլ մինչև ամբողջ խմբի կալանաւորութեան րոպէն նրանք շարունակում էին բանակցութիւնները՝ Մարգարովից յիշեալ գումարը ստանալու համար։ Կալանաւորվածների լուսանկարները ցոյց տալով ականատեսներին, վերջիններս ճանաչել են Թիֆլիսի քաղաքացի Սօլոմոն Դաւիդովիչ Զանգուլովին, որը յանցաւորների շրջանում յայտնի է «Սօնկա» մականունով և իբրև միջնորդ՝ բանակցութիւն էր վարում դրամաշորթ խմբի ու Մարգարովի միջև։ Նա էլ մեղադրվում է իբրև մասնակից դրամաշորթների։ Կալանաւորութեան միջոցին իրան Իվան Միխայլովիչ Դէլլաժիէնի անուանողը, պարզվել է որ, իսկապէս Քութայիսի նահանգի Օզուրգէթի գաւառի Գերէժովուլի գիւղի բնակիչ Նիկիֆոր Իօսիֆովից Դոլիձէն է, որը խմբի կողմից իբրև ներկայացուցիչ դիմում էր արել թէ մինչև Տէր-Մխիթարեանի սպանութիւնը և թէ նրանից յետոյ՝ յիշեալ գումարը ստանալու համար։ Վերջինս էր միևնոյն ժամանակ, որ Տէր-Մխիթարեանին սպանում էր սպանել այն բանի համար, որ նա համոզում էր Մարգարովին փողերը չը վճարել և նոյն իսկ մտածում էր նրանց մատնել ոստիկանութեան ձեռքը։ Կալանաւորութեան միջոցին իրան Թէլաւ քաղաքացի Գրիգոր Մելքօվիչ Ադամօվ անուանողը, պարզվում է այժմ, որ Սղնախի գաւառի Բակուրցիխ աւանի գիւղացի Գէօրգի Անդրէեվիչ Տօրիաշվիլին է, որ յայտնի է «Ալի-Բալտա» մականունով, և որին ճանաչել են Տէր-Մխիթարեանի սպանութեան ականատեսները, իբրև սպանութեան մասնակցողներից մէկը։

Բացի դրանից, սպանութեան իբրև մասնակցող է ճանաչված նաև Ռուբէն Գրիգորիէվիչ Ղոնդաղչեանցը, որ Տէր-Մխիթարեանի սպանութիւնից քիչ առաջ եկել էր վերջինիս բնակարանը բանակցելու նպատակով։ Ներկայ գործի ամբողջ քննութիւնը ներկայացվում է արդէն Թիֆլիսի նահանգական դատարանի դատախազին։

◆ Ծունիկուլէրից վերև Սուրբ-Դաւթի սարի վրա, ձորում, յուլիսի 17-ին գտել են մի անյայտ մարդու դիակ՝ ջարդված գլխով։ Դիակը ուղարկված է հիւանդանոց։ Դատական ոստիկանութիւնը քննութիւն է կատարում այդ մասին։

ԹԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օրդուբաթ, 15 յուլիսի

Ամսիս 10-ին տեղիս սիրողները և նոր բացվելիք դպրոցի աշակերտուհիները տուին մի ներկայացում։ Խաղացին Սէյրիի «Նոր վարժուհի» մանկ. վոդեվիլը և Է. Տէր-Գրիգորեանի «Մէչօյի թուզը» պիէսան։

Խաղի մասին ասելը աւելորդ է, որովհետև շատերը, որոնք առիթ են ունեցել խաղալու գաւառական գիւղերում և քաղաքներում, գիտեն այն բոլոր անյարմարութիւնները, բեմական տեխնիկայի պակասութիւնները, որոնք մեծ չափերով վնասում են խաղի առաջնութեանը։

Աշակերտական պիէսան ընդհանրապէս լաւ էր։ Այդ պիէսում դերակատարները գեռ առաջին անգամն էր, ինչ բեմ էին բարձրանում։

«Մէչօյի թուզը» բաւարար էր։

Ահա չորրորդ ներկայացումն է, որ աջողվում է Օրդուբաթի նման տեղում, ուր հայ ժասա համարեա գոյութիւն չունի և եղածներն էլ, եթէ կարելի է ասել, անտարբերութեան վերին գագաթումն է կանգնել։ Պէտք է շնորհակալ լինել թէ դրսեցի և թէ ներսեցի սիրողներին, որոնց անդուլ ու յամառ ջանքերին ենք պարտական ներկայացումների գործի աջողութիւնը։

Արշ. Տէր-Յովհաննեան

—

Թէլաւ, 14 յուլիսի

Ամսիս 12-ին, տեղիս կլուբի դահլիճում, միջակ ոյժերից բաղկացած դերասանական մի խումբ խաղաց Գունիայի «Քոյը և եղբայրը» դրամա 5 գործ.։

Խաղը միջակ անցաւ։

Թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Հանդիսականները գոհ սրտով հեռացան թատրոնից։

Հետեւեալ օրը, ամսին 13-ին, վրացի սիրողները, մասնակցութեամբ Գուլազեանի, խաղացին Մերկեթելիի «Աւազակներ» 5 գործ. պիէսը։

Դերակատարներն արժանացան բուռն ծափահարութեան։ Դիտող

—

Կարս, 17 յուլիսի

Ամսիս 15-ին, դերասաններ Հ. Շահէնն և Մ. Թաշճեան, իրանց հետ բերած սիրողների մասնակցութեամբ, ներկայացրին «Կրեչինսքի հարսանիքը», և «Օրհասական դեբիւտ» վոդեվիլը։

Դարձեալ բացվեց թէ չէ՝ մի շարք ինքնակոչ դերասաններ իրար հետից թափեցին մի քանի ներկայացումներ, որոնք իրանց խայտառակ խաղերով փչացրին թատրոնի նշանակութիւնը։ Երևի այդ էր պատճառը, որ այս ներկայացման ժամանակ ևս դատարկ էր դահլիճը։

Դուրսը տոմսակ վաճառողի սեղանի առաջ 500-ից աւելի ընտիր հասարութիւն զբօսնում է, բայց տոմսակ առնող չը կայ, չը նայելով որ տեղերի գները անհամեմատ էժան և ամենքին մատչելի էին նշանակել։ Եթէ չը հաշվենք երեք թէ չորս պաուար տիկիններ, օրիորդներ և մի 8 հոգի էլ գիտակից երիտասարդներ, տակը կը մնային այս կամ այն դպրոցի փոքրահասակ պատանիներ, որոնք, ի դէպ է ասել, իրանց շատ անվայելուչ էին պահում։

Շրջիկ դերասանները երբ բեմ են դուրս գալիս և իրանց առաջ տեսնում դատարկութիւն, անկարգութիւն, էլ ինչ սրտով խաղան։ Խեղճերը իրանց ծախքն էլ չին կարող հանել։

Խաղը ոչ մի տպաւորութիւն չը թողեց մեզ վրա։

Շահէնը և Թաշճեանը մեծ ջանքեր էին գործ դնում իրանց շնորհքը ցոյց տալու, իսկ մնացածները դերերը չը գիտէին։ Յուշարարը դերակատարներից աւելի բարձր էր գոռում։ Իմ խորին համոզմունքով, այս տեսակ ներկայացումները ոչ միայն օգտակար չեն, այլև բոլորովին վնասակար։

Կարգապահութիւնը բարիս բուն նշանակութեամբ բացակայում էր դահլիճում։

Արամ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պօտապէնկո, «Մսկէ ջաղբամ», փոխադրութիւն Յակոբ քահ. Սահակեանի, հրատարակութիւն Ա. Դեկլարատեանի, Թիֆլիս, 1910 թ., գինն է 25 կօպէկ։

Ռուս գրող Պօտապէնկօյի ներկայ պատմուածքը նրա միջակ գրուածքներից է։

Նրա մէջ հանդէս է բերված մի շատ սովորական, ամեն մի դպրոցում յայտնի եռևոյթ—մի կողմից սերտող ու անգիր անող, բայց չափազանց աշխատասէր, միւս կողմից ձիրք ունեցող, աչքաբաց, բայց համեստաբար ծոյլ աշակերտների մրցութիւնը։

Հեղինակը ներկայացնում է դպրոցական կեանքի այդ գծի արտայայտութիւնները պատկերաւոր մանրամասնութիւններով, բայց հպիւ թէ նա արդար է, ենթադրելով որ միայն ձիրքով ու տաղանդով, առանց աշխատանքի կարելի է տարիներ շարունակ ծոյլ տալ ծուլութիւն և լինել մշտապէս առաջինը ուսման մէջ։ Անգիտակից սերտողի, մեքենայաբար սովորողի տիպը գրաւիչ չէ, բայց անհասկանալի է և այն հայացքը, որ հեղինակը ուզում է ստեղծել ընդունակ աշակերտի ծոյլ և անհոգ վերաբերմունքի շուրջը։

Անշուշտ՝ հեղինակը ցանկացել է ցոյց տալ, որ չարժէ ոսկէ մեդալի համար գլուխ կոտրել, նախանձ և չար կրքեր գրգռել ընկեր աշակերտների մէջ, և մասամբ հասել է նպատակին, որովհետև պատմուածքի հերոսը ինքն իր սեփական կամքով հրաժարվելով մեդալից յօգուտ իր նախանձոտ ընկերի՝ յաղթում է վերջինին և ոչնչացնում նրա եսական բնաւորութեան չար թելադրութիւնները։

Պատմուածքը կարդացվում է հաճութեամբ։ Փոխադրութիւնը կատարված է դիւրին ոճով և պարզ աշխարհաբարով։

Պէտք է ցաւել, որ թոյլ են տրված այնպիսի սխալներ, ինչպէս օրինակ գործ է ածված «ճաշարան» փոխանակ «սեղանատուն» բառի (երես 6), «չէ» և «չի» անխտիր նոյնատեսակ դէպքերում. «եթէ այդ մրցանակը քեզ հեշտ յաջողվէր, ես ոչինչ չէի ունենալ» (երես 9), «թէպէտ դրա համար գիմնազիայում նրան կը հանեն» (երևի достанется բառի թարգմանութիւնն է) (18), «կապտագոյն տարազով» (20), «նա թերթում էր խնդրագիրը» (երևի задачникъ խօսքի թարգմանութիւնն է) (65), «յիշողութեան և կարողութեան (կարելիութեան) չափով» (67), «սկսեց հիւանդի նման (?) պատուհանից դուրս նայել» (68) և այլն։

Այդ տեսակ սխալներ կարող էին տեղի չունենալ, եթէ փոքր ինչ աւելի ուշադիր վերաբերմունք եղած լինէր դէպի թարգմանութիւնը։ Ա. Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կօջօր, 11 յուլիսի

Պատասխանելով Ս. Մալխասեանին՝ տիկին Դ. Թադէոսեան իբր թէ կամեցել է «մի քանի կարեւոր ուղղումներ մտցնել» նրա գրութեան մէջ, բայց դժբաղդաբար աւելի շուտ ակնյայտ ճշմարտութեան դէմ է գնացել։

Ներկայումս տիկինը չէ «ուզում հին դարմանը քամուն տալ», բայց մենք, նրա կամայականութեան պատճառով Յովնանեան դպրոցից 1907 թ. արձակվածներս, դեռ այն ժամանակ չը կամեցանք նրա և նրա նմանների վարմունքը մամուլի նիւթ դարձնել, որովհետև մեզ համար շատ թանգ էր Յովնանեան դպրոցը և նրա անունը. մենք վճռել էինք բաւականանալ Ուսուցչական Միութեան ըստուած մեր բողոքով և նրա կայացրած վճռով, եթէ անգամ այդպիսով մեզ չաջողվէր լեռվին անձնական բաւարարութիւն ստանալ։ Մենք համոզված էինք, որ մեր այդպիսի վարմունքով ոչ մի վատագ չէինք կարող հասցնել մեր սիրած և փայփայած դպրոցին և նրա անուան։ Բայց այսօր, երբ արդէն երեք տարի է անցել այն օրից և Դ. Թադէոսեանը փոխանակ հին արարքից կարմրելու՝ յանդգնում է հրապարակով անտեղի վիրաւորանք հասցնել 1907 թ. ապօրինաբար արձակված ուսուցիչ-ուսուցչուհիներին, նրանց թում և մեզ,— ստիպված ենք աւելորդ համարակութեան առաջ դառն իրականութիւնը։

Թողնելով մի կողմը, թէ որքան արդարացի է նրա պատճառաբանութիւնը, թէ իբր Լ. Սարգսեանի պատճառով դպրոցը ինչպես չէ կրել, որովհետև նրա պաշտօնը տիկինը ձրի է կատարել, բայց հետևանքն այն եղաւ, որ 1906—7 ուսումն. տարվայ ընթացքում Յովնանեան դպրոցի ուսումնական մասը գրեթէ բոլորովին մատնվեց անիշխանութեան և դպրոցը անպայման տուժեց. իսկ այսպիսի մի դրութիւն աւելի ծանր պէտք է լինի Յովնանեան դպրոցի և ընդհանրապէս հայ հասարակութեան համար, քան թէ մի քանի հարիւրակ ռուբլի տեսչական պաշտօնի ատիթով աւելի ծախսելը։ Տիկինը թոյլ է տալիս հրապարակով ասելու, թէ իբր խուսէր հրաւիրված էր մէկ տարի ժամանակով։ Մի՞թէ նա մոռացել է իր այս դարձուածքը. «միասին մտնենք և միասին թողնենք». ահա թէ ինչ խօսքերով էր դառնում նրանց, որոնց ձեռքով կրակ էր բռնում այն ժամանակ և որոնց ջանքով աջողվեց Յովնանեան դպրոցը մտնել։

Կատարելապէս հեռու է նա ճշմարտութիւնից, երբ ասում է, թէ իբր՝ «տարվայ վերջին յայտարարվեցին ազատ՝ պատճառաբանված որոշումով մի քանի հոգի ուսուցչական խմբից». հոգաբարձութիւնը ոչ միայն առանց պատճառաբանութեան, այլ և ամենանպաստակաւ և գոհէկ ձևով, ծառայի բերանով, յայտարարեց ի գիտութիւն արձակված ուսուցիչ-ուսուցչուհիներին հոգաբարութեանդ որոշումը, և մինչև այսօր էլ մեզանից ոմանք սպասում են տիկնոջ պատճառաբանութիւնը լսելու։

Բաւական չէ անցեալում այն խիստ հարուածը, որ անտեղի կերպով հասցվից մեզ, այլ և այսօր յանդգնում էք հրապարակով աղաղակելու, թէ իբր արձակվածները «չինօվնիկ» են եղած. գուցէ բարի կը լինէին, ապացուցելու որ յիրաւի մեր փոխարէն աւելի պատրաստվածների բերեցիք։

Մենք աւելորդ ենք համարում մանրամասն կանգ առնել անցեալ դէպքերի վրա. «հին դարմանը քամուն տալու» ոչ մի կարիք չենք զգում. սակայն որպէս ապացոյց մեր ճշմարտութեան առաջ ենք բերում Ուսուցչական Միութեան այն ժամանակվայ որոշումը, որ հիմված է մանրազննին քննութեան վրա. թող հասարակութիւնը տեսնէ, թէ որքան մեծ նմանութիւն կայ հին և նոր հոգաբարձութեան վարմունքի մէջ, և թէ ինչպէս ամեն տեղ էլ ուսուցչութիւնը զոհ է դառնում հոգաբարձութեան կամայականութեան։ Կովկասի Հայոց Ուսուցչական Միութեան ընդհանուր ժողովը իր յունիսի 11-ի նիստում հետևեալ որոշումը կայացրեց. «Աչքի առաջ ունենալով, որ Մարիամեան-Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը մինչև օրս (գրեթէ մի տարվայ ընթացքում)-դրական պատասխան չէ կամեցել տալ թէ Ուսուցական Միութեան կենտրոնական Վարչութեան և թէ ընդհանուր ժողովի կողմից կատարված դիմումներին, նոյն դպրոցի ուսուցչական կազմից բողոքող անդամների հեռացման վերաբերմամբ, ընդհանրապէս խուսափող դիրք բռնելով՝ տրամադիր է եղած գործը լուծեանտալ և այդպիսով մեղմել ուսուցիչների արդարացի բողոքը, ընդհանուր ժողովը որոշեց իր յուլիսի 11-ի նիստում դադարեցնել այդ խնդրի վերաբերմամբ իր բոլոր յարաբերութիւնները հոգաբարձութեան հետ և, դատապարտելով հոգաբարձութեան տգեղ վերաբերմունքը, թէ Ուսուցչական Միութեան և թէ ապօրինի հեռացրած ուսուցիչների վերաբերմամբ, Ուսուցչական Միութեան կենտրոնական վարչութեան առաջ ու միաժամանակ դատարանի միջոցով պաշտպանել նրանց իրաւունքները, եթէ բողոքողները տրամադիր լինեն այդ բողոքը դատարանին յանձնելու»։

Օր. Մալուխեան
Օր. Հ. Մարկոսեան

—

Պեատիգորսկ, 7 յուլիսի

Հայ Դրամատ. Ընկերութեան վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հայոց թարգմանիչների (իբր թէ հայերէն է), որ իր հաւանութիւնը գտած քանի մի պիէսների աջող թարգմանութիւնները՝ հայ ձեռնհաս թարգմանիչները վաղօրօք պատրաստեն ու առաջարկեն Դրամատ. Ընկ. վարչութեանը։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, յիշեալ ընկերութեան վարչութիւնը կարծես թէ մի առանձին շնորհ ու պատիւ է անում հայոց թարգմանիչներին յայտնելով միայն իր բարի ցանկութիւնը, իսկ թէ հայոց թարգմանիչներն ինչ պէտք է ստանան իրանց աշխատանքի համար, յարգոյ վարչութիւնը լռում է այս մասին։ Ճիշդն ասած՝ չը գիտեմ, կը գտնվեն արդեօք հայոց թարգմանիչներ, որոնք կը կամենան յիշեալ վարչութեան բարի ցանկութիւնն ի կատար ածել. եթէ գտնվում են այսպիսիները, այն ժամանակ թող բարեհաճեն կարդալ ներկաս, որով՝ հաւատացած եմ գլխովին, որ առանց որևէ վնաս կրելու, պէտք է օգտվեն բաւականին։

Ահա գլխիս անցած-դարձածները։

Մի ժամանակ թարգմանել եմ ընագրից Ա. Դօդէի «Խոչընդոտ» (l'obstacle) պիէսը, որ տպագրվել է շաբաթաթերթ «Ցարազում» և արտատպվել առանձին գրքոյկով. սակայն ես ոչ մի վարձատրութիւն չեմ ստացել, չը նայելով խոստմանը։ Ցիշեալ պիէսը ոչ մի տեղ և ոչ մի անգամ հայ բեմի երես չէ տեսել, և հասկանալի է թէ ինչու, որովհետև մեր դերասանները, որ էլ լայեղ չեն անում դերասան անունն, այլ artiste մեծագղորդ կոչումն են իրանց տալիս, անընդունակ են այսպիսի մի լուրջ պիէսի տիպարները ուսումնասիրել և, որ գլխաւորն է, միտքը հասկանալ։ Ինչ ասել կուզէ, որ խօսքս բացառութիւնների մասին չէ ու, դժբաղդաբար, հայ դերասանական շրջանում այն ատիճան սակաւ են բացառութիւնները, որ եղած բացառութիւնն էլ մի չը տեսնված, երբէք չը լսված, իսկ և իսկ բացառութիւն պէտք է համարել։

Թարգմանել եմ Ֆրանսիացի հռչակաւոր դրամատուրգ Բրիէօի «Օրօրոց» (Le Berceau) պիէսը, որը միայն մի անգամ է խաղացվել Բագուում, այն էլ շատ անշնորհք կերպով, ստացել եմ իբր թարգմանչի վարձ 15 ր., ուրիշ ոչինչ։ Տիկին Սիրանոյշն իր բենեֆիսին ներկայացրեց իմ թարգմանած «Ֆրուֆրուն», որի համար ստացել եմ վարձատրութիւն 25 ռուբ.։ Սոյն պիէսը ներկայացվել է դարձեալ Բագուում երկրորդ անգամ, սակայն ես ոչինչ չեմ ստացել՝ չը նայելով բազմաթիւ դիմումներիս։ Պ. պ. Աբէլեան և Վրոյը— վախում եմ դերասան կոչել սրանց—արտիստօրէն խաղացել են իրանց բենեֆիսին զանազան ժամանակներում ու զանազան քաղաքներում Էրկման-Շատրիանի հեղինակած «Ֆրից բարեկամը» (L'Ami Fritz) պիէսը մի քանի անգամ, սակայն ոչ մէկից մի գրշ անգամ չեմ ստացել, երևի այն պատճառով, որ հասցէս անյայտ է եղել նրանց։ Թող գիտենան յարգոյ արտիստները, որ այսքան գլխացաւանք ունենալուց վերջը, այլես պարտքով չունեմ նորանոր գլխացաւանքներ ստեղծել ինձ համար. ուրեմն ստիպված եմ հաստատ հասցէս մանրամասնօրէն գրել այստեղ—Ղազարոս Սղայեանց։

Գերմաներէնից, ֆրանսերէնից, ռուսերէնից և վրացերէնից բազմաթիւ թարգմանութիւններիս համար, որոնք տպվել են «Արձագանքում» և գլխաւորապէս Արասխանեանի «Մուրճում», ոչինչ չեմ ստացել։

Թող փոքր ինչ համբերութիւն ունենայ բարեմիտ ընթերցողն և, ահա, վերջացնեմ ասելիքս։

Մի վերին ատիճանի յարգելի բժիշկ, որը յայտնի է մեզանում իր բազմազան իմաստալից բրօշիւրներով, բարեհաճեց շնորհ անելով ինձ թարգմանել տալ հայերէնի հետևեալ մօտ 400 երեսանոց «Das goldne Buch für die Frauen» գերմաներէն գիրքը՝ բաղկացած 10 գլխից։ Ահա, անցել է արդէն չորս տարի, ինչ ես վերոյիշեալ գիրքը թարգմանել եմ Վիէննա եղած միջոցներին և իր ժամանակին ղրկել եմ պատուիրած ծրարով յարգելի բժշկին, որ և ստացել է, սակայն նրանից ոչ մի կօպէկ չեմ ստացել։

Ցիշեալ գիրքը թարգմանած միջոցներին հարցրի Վիէննայի հավալարանն աւարտած բժիշկ Ց. Գարանֆիլեանին, թէ դրամական ինչ վարձ կը ստանայ թարգմանիչը, եթէ յանձնարարվի սրա նման մի գործ թարգմանել գերմաներէնից։ Կորական պատասխանն եղաւ— minimum 500 կրօն, որը ռուսական դրամի փոխած՝ կանէ 250 ռուբլի։

Ահաւասիկ այն փառքն ու դափնիները, որոնք վաստակել եմ թարգմանչական ասպարէզում, և որոնցից ոչ թէ մի մասը միայն, այլ ամբողջովին, հոգով սրտով պատրաստ եմ գիշել հայոց թարգմանիչներին, որոնց «զգայուն սիրտն ազգասիրական բուռն զգացմունքներէն դրդեալ՝ ուժգնօրէն տակաւին կը բաբախէ կոր»։ Թող յարգոյ ընթերցողը փորձէ վերոգրեալ քանի մի խօսքերն արտասանել à la hunhun ու այն միջոցին կը պատկերանայ պարզապէս հայոց թարգմանիչների աքանչելի ու միևնոյն ժամանակ խիստ նախանձելի վիճակը։

Մ. Նաւասարդեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
17 յուլիսի

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Թագաւորը նուիրեց 10,000 ֆրանկ՝ բաժանելու մայիս ամսին Բուխարեստում հեղեղներից վնասված բնակիչներին։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բաց է արել կօնստանցայում Ռումինիայի ուսուցիչների համագումարը։ Մասնակցում են 1,700 հոգի. համագումարի նպատակն է մշակել թագաւորութեան ներսում ուսուցչական քաղաքականութեան վերաբերութեամբ նոր դիրեկտիվներ։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ։ Վլադիկավկազեան լեռնային կլուբի անդամներ Պրէսբրաժէնսկայա, Դօլգայա և Դուխօվսկայա երեք ուղեցոյցներով Դէվդորակի սառցարանից դուրս եկան յուլիսի 13-ի ցերեկվայ ժամը 1 և 35 րոպէին և հասան Երմօլայէվի տնակը երեկոյեան ժամը 6-ին։ Դիշերելով, առաւօտեան ժամը 3 և.15 րոպէին նրանք վերսկսեցին ճանապարհը և հասան Կաղբէկի գագաթը ցերեկվայ ժամը 2 և 15 րոպէին։ Մի ամբողջ ժամ և 22 րոպէ ճանապարհորդները զբաղված էին դիտողութիւններ անելով և լուսանկարելով։

ՔԻՇԻՆԷՎ։ Ակկերմանի գաւառի Տարուտին աւանում բացվեց գիւղական առաջին ուեթդասեան դիմաղրիան։

ՎԵՐԻՆԷՈՒԻՆՍԿ։ Հինգ չարագործներ, ժանդարմերիական րոտմիստրի, քաղաքական վերահսկիչի և ժանդարմների ու զօրագնդերի հանգստեանների հագած, Նիշկինօ գիւղում խուզարկութեան ենթարկվեցին գիւղացի Եֆիմովի տունը, կալանաւորեցին և ապա արձակեցին նրան 1000 ռուբլու գրաւական առնելով, որից յետոյ դուրս եկան և անյայտացան։

ՊԻՏԵՐԲՈՒՐԳ։ Ինտենդանտային պահեստից զինուորների շինելներ վաճառելու գործի համար կալանաւորեցին և ապա արձակեցին նրան 1000 ռուբլու գրաւական առնելով, որից յետոյ դուրս եկան և անյայտացան։

ՊԻՏԵՐԲՈՒՐԳ։ Ինտենդանտային պահեստից զինուորների շինելներ վաճառելու գործի համար կալանաւորական բաժանմունքների են դատապարտվել, առանձին իրաւունքներից զրկվելով, տիտուլ. սովետնիկ Կօրօյչան 3½ տարի ժամանակով, կապիտան Մացէյէվսկին 2½ տարով, առուտրական Ռուբախինը և գործակատար Կօրէլսնիկը 1½ տարով, կապիտան Ֆէօդորովը հաուպվախտ նստելու՝ 3 ամսով, արդարացել է վախտեր Բայանովը։

ԹԱՒՐԻԶ։ Զուլֆայից եկաւ առաջին ապրանքատար աւտոմօբիլը 800 պուդ բեռով։ Ճեռնարկողն է Վասիլեսվը։ Արշաւումը կատարված է արագ և բարեյաջող։

ՄՕՍԿՎԱ։ Երեկոյեան տեղացող յորդ անձրևից հեղեղված է քաղաքի ցածրադիր մասերը։

Սէրպուխովի Նիկոլսկի եկեղեցուց՝ Նիկոլայ Հրաշագործի պատկերի վրայից՝ գողացել են 32 բրիլեանտներ։

18 յուլիսի

ՊԱՐԻԶ։ Պերլաշէզ հանգստարանում գերեզմանապահներին փոխարինել են զինուորներ, գերեզմանային աշխատանքների կապալառուների լօկաուտի պատճառով։

ԲԻԱՐՐԻՑ։ Միջազգային զբօսանաւերի արշաւին՝ Ալֆօնս թագաւորը իր «Սպանիա» զբօսանաւով, որին զեկավարում էր ինքը անձամբ, վերցրեց ֆրանսական նախագահի մրցանակը։

ՍՏԱՄԲՈՒԼՈՎ։ Հրդեհից բոլորովին այրվեց 8 տուն իր բոլոր յարմարութիւններով։ Կրակը առաւօտեան ժամը 8-ից սկսել է տարածվել. քաղաքի կենտրոնական մասը բոցերի մէջ է։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Մօտաւորապէս երեկոյեան ժամը 11-ին Մակարիէվսկի գաւառի Իսայ գիւղին մօտիկ մարդատար «Դիմիտրի» շոգենաւը ընդհարվեց հողհան մեքենային։ Սպանված են երկու ուղևոր, չորսը վիրաւորված են և մի քանիսը ջրասոյզ են եղել։

ՐԻԳԱ։ Երէկ երեկոյեան ժամը 11-ին բիգա-օրլօվեան երկաթուղու Տուկկումեան գծի Տօրէնսբերգ կայարանին մօտիկ մարդատար գնացքը ընդհարվեց Տուկկումից եկող ապրանքատար գնացքին։ Ջարդված են երեք ապրանքատար վագոններ և մարդատար գնացքից մի քանի վագոններ։ Դիշերը դադարած երթևեկութիւնը վերականգնված է։

ՕԴԵՍՍԱ։ Զումայից հիւանդացան երկու հոգի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

«Հովիտին».— Դուք ձեր վերջին համարում յայտնում էք, որ «Մշակը» յիշատակել է ձեր անունը Կաթողիկոսի ասած խօսքերի առիթով։ Այդպիսի յիշատակութիւն մեզանում չէ եղել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վիներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½,—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԼԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Հաւատները ձրի։ Համախորհրդի (կօն

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ

Առ. և Ա. Մ.

„ՆԱՐԶԱՆ“ | Սեղանատան | „ԷՍՍԵՆՏՈՒԿԻ №20“

Պահանջեցէք ամենուրեք! Չվերադարձ

ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19։ ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։ ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԹԹՈՒ, միանգամայն մաքուր, ստացված Կիսլովոդսկի «Նարզանից»։

ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐԲՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ — ТИФЛИСЪ, Гановская, № 10.
Ածխաթթուի պատուէրների և մանրամասն նկատագրութիւնների ու պրէյս-կուրանտների համար դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.

(20, 30) (М. 209548) 847. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐՔՈՒՆԻ

Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչև սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кн. Гирей.

(ե. հ. կ.) 565. 0—28

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.

Արաս-Արաքսկայա, տուն Միրզիանովի։

(ե. հ. կ.) 725. 100—17

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՄԱՒԻՐԻ հայոց դպրոցներին հարկաւոր են միջնակարգ կրթութեամբ

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ

և

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

բոլոր առարկաների համար։

Ուսուցչուհիների շաբաթական դասերի թիւը 20, իսկ ուսուցիչներինը 24։ Դասագինը 30 բուբլի։ Էջմիածնի ճեմարանի ընթացաւարտներին տարեկան 200 ր. աւելի։ Ճեռագործի ուսուցչուհու համար առանձին պայման։

Ցանկացողները թող փութան դիմել հոգաբարձութեան. Армавиръ, Кубанск. обл. Попечительству Армянскихъ Церковно-Приходскихъ школъ.

(ա. օ.) 848. 3—1

Վեհափառ Կաթողիկոսը Սանահնի վանքում

18 գոյնով մեծադիր պատկեր

ԳԻՆԸ 3 Ր.

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին ձրի։

Դիմել՝ Тифлисъ. Бюро Печати, Мадатовская, 5.

(ե. կ.) 811. 0—4

ԿՈՐՁԵՆ ՈՍԿԻ ԾԱՄԱՑՈՒՑՉՆԵՐԸ. ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է. Տղամարդ. համար նոր ձևի ժամաց. ֆրանս. իսկական ոսկուց, բաց, չքեղ գրութիւնով «Prima Roskop» մարկայով. այդ ժամաց. մասնագէտը նոյնիսկ չէ կարող զանազանել 56 յարգի իսկական ոսկի ժամացույցից։ Բայի շքեղ լինելուց՝ «Prima Roskop» ժամացույցը չվէրցաց. ամենալաւ տիպուածքով է. ժրանվան յայտնի ֆաբրիկայի գործ։ Կարում կոթից՝ 40 ժ. մի անգամ—«Remontoir». մինչև բոպլենները ուղղված ընթացքով, 6 տ. գրաւոր երաշխաւորութեամբ։ Գինը առայ 12 ր. էր, այժմ միայն 2 ր. 90 կ., 2 տարի 5 ր. 40 կ.։ Այդ ձևի խոշոր ժամաց.— 4 ռուբ.։ Մեր ֆիրմայի պրոպագանդիստները տարածելու համար՝ մենք կցում ենք իւրաքանչ. ժամաց. իրրև բոնուս ձրի՝ 1) Գրեթէ չդիպչոյ նոյն ոսկուց. 2) ԲՐԻԼՕՎ ՆՈՐՈՒԹԻՒՆ.—Ա. տօմսակով սինեմատոգրաֆի հետաքրքիր. տեսարաններով կամ թէ նոյն 84% արծաթից. ոսկեգօծ. 3) Դ-ր Գօնի ծիսափող-ապպարատ՝ անփնաս ծխելու պապիրոս կամ սիգար. և կամ թէ գրելու համար գրպանի պլիրոր. 4) Այծմատչի քսակ ժամաց. փչանալուց պահպ համար։ Պատուէրները ուղարկ. ենք վերադիր մն և ատանց կանխավճ.։ Հասցէն՝ ВАРШАВА. Складъ часовъ Т-во „Милано“. Дикая ул. № 3—М. 1—4 ժամաց. համար ճանապարհածախք հաշվում է 50 կ.։ Ով տեսնէ այդ ժամաց. նա կը հաւատայ, որ նրանք իսկական ոսկուց են։ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Կանացի բաց ժամաց. նոր՝ հատուկ՝ կանացի կօմպլեկտով՝ 3 ր. 90 կ.։ Կանանի խոշոր ժամաց.—7 ր.։ Թղթակցութիւնները ուսերէն կամ գերմաներէն։

(ե.) (В 48476) 845. 3—1

Լոյս տեսաւ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒ.-Ք. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

Հայոց եկեղեցու համառօտ պատմութեան դասագիրքը

Երրորդ տպագրութիւն, բարեփոխած ու պատկերազարդ։ Գինը 50 կ.։ Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։

(ե. հ.) 849. 2—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Հայոց լեզուի և առարկաների համար ընթացաւարտ ՈՒՍՈՒՑԻՉ, որը նաև պէտք է պատրաստի երգեցիկ խումբ և տօն ու կիրակի օրերը երգէ եկեղեցում։ Շաբաթական կունենայ 28 դաս։ Ռոճիկը 600 ռուբլի։ Հասցէն՝ Петровскъ (Дагест. обл)., Попечетельству Армянской школы.

(ա.օ.) 840. 3—3

Լոյս տեսաւ

Հայ գրողներ

Բ. հատոր

Կազմեցին Ղ. Ղայլեան, Յ. Թումանեան և Գ. Փափազեան

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲ.

Դիմել՝ Тифлисъ, книжн. магазинъ „Гутенбергъ“, Г. Галустяну. Փողի տեղ ընդունում ենք և մարկաներ։

(հ.կ.ե.) 829. 3—3

ՀԻՊՆՕՏԻԶՄ

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՅՆԵԼ

Հիպնօտիզմ բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան

Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուսել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մտաւորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօգական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ զրանչի ոյժի միջոցով զարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիոնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօտացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, մեսմերիզմի, ներշնչման, հոգեբուժութեան և Ցերեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կօպէկի նամակադրոշմ ճանապարհածախքի համար։

ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։

Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.

(ե.շ.) 689. 100—14

1910 թի ընթացքում

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՑԽԵԼՈՒ Է ԵՐԿՈՒ ՄՐՑԱՆԱԿ.

ա) յանուն տ. Մ. Մակարեանի՝ լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար (150 ր.) և բ) «Յօբելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրոնի 50-ամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար (100 ռ.),

Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անուն-ազգանունը, կարող են կեղծանուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունները գրելով մի փակ ծրարի մէջ, որ կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ։

Հեղինակները և թարգմանիչները պարտաւոր են սկզբից յայտնել այն հասցէն, որով պէտք է վերադարձվեն պիէսները մրցանակաբաշխութիւնից յետոյ։

Այս տարի իբր բացառութիւն, պիէսները կընդունվեն մինչև սեպտեմբերի 15-ը, որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի։

Մրցանակի կարելի է ներկայացնել միմիայն նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմում դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում։

Մրցանակը կարող է յատկացվել լիովին կամ կիսով չափ, նայած պիէսի գրական արժանաւորութիւններին։

Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացման համար վարչութիւնը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է զուտ արդիւնքի 10% ը։

Այդ իրաւունքը վերապահվում է վարչութեան միմիայն մի տարվայ ընթացքում, սկսած պիէսը ստանալու օրից։

Պիէսները պէտք է ուղարկել վարչութեան նախագահին հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Грибоѣдовская. 26. Т. Н. Іоаннисяну. Արտասահմանից՝ Tiflis (Russie). Rue Griboedovskaja, 26. M-r Tigran Ioannisian. avocat.

(ե. շ.) 843. 2—1

Типографія „Экономія“ Большая Ванская № 3.